

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Անձերու Փոփոխութիւնը Բաւարար Չէ

Սեպտեմբեր 13-ին ամբողջացաւ Հայաստանի վարչապետ Կարէն Կարապետեանի պաշտօնավարման առաջին տարին: Այս առթիւ բնականաբար կը կատարուի անոր գործունէութեան արժեւորումը ու գնահատականներ կը տրուին, թէ ան որքանով կը կրցաւ իրականացնել իր հետ կապուած յոյսերը:

Տարի մը առաջ, հայաստանի քաղաքական մեկնաբանները կը յայտնէին որ, Կարապետեան յատկապէս Մոսկուայէն կանչուած է երեւան, շտկելու համար երկրի տնտեսական բարդ իրավիճակը, լեցնելու պետական դատարկ գանձը եւ նոր ներդրողներ բերելու Հայաստան: Դիմացը՝ անոր խոստացուած է 2018-էն ետք, երբ կ'աւարտի Սերժ Սարգսեանի պաշտօնավարման ժամանակաշրջանը եւ երկիրը կ'անցնի վարչապետական կառավարման ձեւին, դառնալու երկրի թիւ մէկ անձը:

Կարէն Կարապետեանի վարչապետ նշանակումը դրական անդրադարձ ունեցաւ ժողովուրդի մօտ: Վերջապէս կու գար անձ մը որ հեռու մնացած է տիրող «ճահիճէն»: Սակայն, շատ չուշացած ան անդամակցեցաւ նոյն այդ «ճահիճին»՝ դառնալով Հանրապետական կուսակցութեան անդամ: Ապա, առանց թեկնածու ըլլալու հանրութեան ներկայացաւ որպէս նոյն կուսակցութեան դեմքը՝ խորհրդարանական ընտրութիւններու ընթացքին: Այդ առթիւ ան Հայաստան հրաւիրեց խուճը մը Ռուսաստանաբնակ Հայ մեծահարուստներ, որոնք խոստացան միլիարդաւոր տոլարներու ներդրում կատարել երկրի տնտեսութեան զարգացման մէջ:

Կարէն Կարապետեանի պաշտօնավարման առաջին տարուայ աւարտին, խոստացուած այդ ներդրումները տակաւին կը սպասեն իրականութիւն դառնալու, տնտեսական իրավիճակի բարելաւումը ժողովուրդի մօտ զգալի չէ, պետական գանձը կը մնայ նոյնքան դատարկ՝ գլխա-

Շար.ը էջ 7

### Եւրոպացի Դեսպաններուն Համաձայն Առ Այժմ ՀՀ-ԵՄ Նոր Համաձայնագրի Ստորագրումը Խանգարող Հանգամանք Չկայ



Ֆրանսայի դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանտիէ (Աջին) եւ Գերմանիոյ դեսպան Մաթիաս Քիսլեր մամուլի ասուլիսի ընթացքին

«Եւրամիութիւնը ընդունած է Եւրասիական Տնտեսական Միութեան (ԵՏՄ) անդամակցելու Հայաստանի որոշումը, որովհետեւ Եւրամիութիւնն ու Հայաստանը գործընկերներ են համահաւասար մակարդակի վրայ», Երեւանի մէջ կայացած մամուլի ասուլիսի ընթացքին յայտարարեց Հայաստանի մէջ Գերմանիոյ արտակարգ եւ լիազօր դեսպան Մաթիաս Քիս-

լեր: «ԵՄ-ն կ'առաջարկէ համագործակցութիւն, բայց չստիպեր», - աւելցուց դեսպանը շեշտելով, որ ճիշդ այս ոգիով ընթացած նոր համաձայնագրի շուրջ բանակցութիւնները:

Օգոստոսի վերջերուն «Բագէ» համահայկական երիտասարդական հաւաքի մասնակիցներուն

Շար.ը էջ 5

### Եւրոխորհրդարանը Պիտի Ուսումնասիրէ Ատրպէյճանի Նախագահական Ընտանիքի Կաշառակերութեան Խայտառակութիւնը

Եւրոխորհրդարանը մօտ ապագային պիտի պատրաստէ «Կաշառակերութիւնն ու մարդու իրաւունքները երրորդ երկիրներու մէջ» փաստաթուղթը, ուր անդրադարձ պիտի կատարուի Ատրպէյճանի նախագահական ընտանիքի մասնակցութեամբ եւ վերջին օրերուն մեծ հնչեղութիւն ստացած «Ատրպէյճանական լուսցքատուն» կաշառակերութեան խայտառակութեան վրայ:

Այս մասին կը յայտնէ ատրպէյճանական «azadliq.info» լրատուական գործակալութիւնը:

«Կաշառակերութիւնն ու մարդու իրաւունքները երրորդ

երկիրներու մէջ» փաստաթուղթը կը ներկայացնէ կաշառակերութեան դէմ պայքարի եւ մարդու իրաւունքներու պաշտպանութեան բնագաւառին մէջ Եւրոմիութեան ընկերները:

Փաստաթուղթին մէջ նշուած է, որ կաշառակերութիւնը չափազանց մեծ վտանգ կը ներկայացնէ մարդու իրաւունքներուն համար, եւ այս տեսանկիւնէ կաշառակերութեան դէմ պայքարը չափազանց մեծ նշանակութիւն ունի: Փաստաթուղթին մէջ միեւնոյն ժամանակ ներկայացուած են կաշառակերու-

Շար.ը էջ 4

### Նոր Բացայայտում. Հունգարիա Եօթը Միլիոն Տոլարով Սաֆարովը Վաճառած է Ատրպէյճանին

Համաշխարհային մամուլի եւ «Կազմակերպուած յանցաւորութեան ու կաշառակերութեան հետաքննութեան նախագիծի» կողմէ գաղտնագրուած Ատրպէյճանի կառավարող վերնախաւի կողմէ դրամի լուսցման մասին պատմութիւնը նոր զարգացումներ կը ստանայ:

Հետաքննութեան մասնակցող Հունգարական լրագրողական կազմակերպութեան կողմէ կատարուած բացայայտումները լոյս կը սփռեն, շուրջ հինգ տարի առաջ Հունգարիոյ եւ Ատրպէյճանի իշխանութիւններուն միջեւ կայացած գործարքին վրայ, որուն արդիւնքով Պաքուին արտայանձնուած էր Հունգարիոյ մէջ իր պատիժը կրող հայ սպայ Գուրգէն Մարգարեանը կացինահարած ատրպէյճանցի սպայ Ռամիլ Սաֆարովը:

Մասնաւորապէս, պարզ դարձած է, որ ճիշդ այդ գործարքի կայացման ժամանակահատուածին Ատրպէյճանէն 7 միլիոն ամերիկեան տոլար փոխանցուած է Հունգարական «MKB» դրամտան մօտ բացուած հաշուին:

Բացայայտուած փաստաթուղթերը ցոյց կու տան, որ այդ հաշուէհամարը պատկանած է «Velasco International» ընկերութեան, իսկ փոխանցումն ալ կատարուած է «Metastar Invest LLP» ընկերութեան կողմէ, որ գաղտնագրուած փաստաթուղթերուն մէջ ատրպէյճանական իշխանութիւններու կաշառակերութեան նախագիծին մէջ ներգրաւուած չորս ընկերութիւններէն մէկն է:

Աւելին, բացայայտումները ցոյց կու տան, որ «Velasco International» ընկերութիւնն ալ որպէս օֆշորային ընկերութիւն, կը պատկանի Ատրպէյճանի վարչապետի փոխանորդ Շաքուպէյ իւլապովին որդիին՝ Օրխան իւլապովին:

Հունգարիոյ այդ օրերու վարչապետ Օրպանի եւ Ատրպէյճանի

Շար.ը էջ 7

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

## ARMENIAN INDEPENDENCE DAY

### SUNDAY, SEPTEMBER 17-2017

# FESTIVAL

VERDUGO PARK GLENDALE  
1621 Canada Blvd., Glendale, CA, 91206  
Starting at 11:00 am

FREE ADMISSION  
ՄՈՒՏՈՐ ԱՂՍ

GENERAL SPONSOR  
INNOVATIVE Designs Manufacturing, Inc.  
By TED & NORA KOROGHLIAN

SPONSORS  
AdventistHealth Glendale  
GARNI www.GarniUSA.com

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ ԱՐՈՒԵՍԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ ԳԻՐԵՐՈՒ ՎԱՀԱՍՏ ՓՈՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ - ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

**ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

### Որոշուել է Պայթեցնել Ատրպեյճանի Փուլչիկը

**ՆԱՅԻՐԱ ՉԱՅՐՈՒՄԵԱՆ**

Ամերիկացի սենատոր Դիկ Դերբինն առաջարկել է պատժամիջոցներ ընդունել Ատրպեյճանի ղեկավարութեան դէմ: Այս մասին նա յայտարարել է յատկացումներ կոմիտեի նիստի ժամանակ:

Յայտարարուել է նաև, որ ԱՄՆ Կոնգրեսը որոշել է լրացուցիչ 1.5 միլիոն դոլար յատկացնել Ղարաբաղում ականագերծման աշխատանքների համար:

Ատրպեյճանցի վերլուծաբանները փորձում են գտնել Ատրպեյճանի դէմ ծաւալուող միջազգային արշաւի աղբիւրները: Աւելի ճիշտ, նրանք հաւանաբար գիտեն, թէ որտեղ են սկսում քննարկը, սակայն փորձում են սլաքներն Ալիեւից շեղել ուրիշների ուղղութեամբ:

Ատրպեյճանի դէմ իրօք լուրջ արշաւ է սկսուել: Այնպիսի տպաւորութիւն է, որ այն ուղղուած է ոչ թէ Ալիեւի վարչակարգը տապալելուն (նա շատերին է ձեռնտու), այլ ստիպելու, որ որոշակի պայմաններ ու լուծումներ ընդունի: Դրա համար չի բացառուում, որ եւ պատժամիջոցներ ընդունուեն, եւ սառեցուեն Ալիեւի միլիարդներն արեւմտեան ու այլ բանկերում:

Վերջին 2-3 տարիներին Ատրպեյճանը ցնցուած է ներքին եւ միջազգային սկանդալներից: Առաջին հօգոր հարուածը պանամական սկանդալն էր, յետոյ ատրպեյճանցի իրաւապաշտպանների եւ լրագրողների ձեռքարկութիւններն էին. 3 ատրպեյճանցի կին 20 կանանց թւում էին, որոնց ԱՄՆ-ն ճանաչել է մարդու իրաւունքների պաշտպանու:

Յետոյ մէկ այլ սկանդալ «կրակեց», երբ հրապարակուեց, որ Ատրպեյճանը իսրայէլցի գինուորականներին ստիպել է գնուած գէնքը Ղարաբաղում հայերի վրայ փորձարկել: Իսրայէլը ստիպուած էր սառեցնել անօդաչու սարքեր վաճառած ընկերութեան գործարքը:

Այլ սկանդալներ էլ եղան, մասնաւորապէս կապուած ԵՆԽՎ ղեկավար Պեղրո Ազրամունտի,

ինչպէս նաև Եւրոպայի խորհրդում այսպէս կոչուած «խաւիարային դիւանագիտութեան» հետ: Այս շաբաթ էլ հրապարակուեցին միջազգային հետաքննութեան արդիւնքները, որոնք վկայում են, որ Ատրպեյճանը կաշառել է Եւրոպացի եւ այլ պաշտօնեաների:

Ակնյայտօրէն ստեղծուած է Ատրպեյճանի մի կերպար, ըստ որի այդ պետութիւնը կարող է գոյութիւն ունենալ միայն կաշառքի շնորհիւ, որովհետեւ այլ հիմքեր չկան: Բայց քանի որ կաշառելու փողը նուազում է՝ նաև թն աւարտուած է, որոշուել է պայթեցնել Ատրպեյճանի փուլչիկը:

Իզուր չէ, որ Ալիեւն ամէն ինչի մէջ մեղադրում է բրիտանական հետախուզութեանը: Հաւանաբար, հենց լոնտոնին է պատկանում Ատրպեյճանին «սանձելու» նախաձեռնութիւնը, որն արևում է Իսրայէլի օգնութեամբ: Ալիեւին ցոյց են տուել, թէ որքան նեղ է նրա մանևերի տեղը եւ որքան թույլ են այդ պետութեան իրաւական փաստարկները:

Կարելի է տրուել գայթակղութեանը եւ որոշել, որ Ալիեւին նման կերպ հարկադրում են դարբաղեան հակամարտութեան կարգաւորման: Ալիեւն անձամբ է յայտարարել, որ իրենց ստիպում են ճանաչել Ղարաբաղի անկախութիւնը: Սակայն չի բացառուում, որ Ղարաբաղը միայն մեծ փաթեթի մասն է, կայ նաև Նախիջևանի եւ տարածաշրջանի ապաշրջափակման հարցը:

Համաշխարհային քաղաքականութիւնում մեծ «մաքրութիւն» է սկսել. Սեպտեմբերի 25-ին Իրաքեան Բրդստանն անկախութեան հանրաքուէ է անցկացնելու: Դրան կարող է յաջորդել տարածաշրջանային սահմանների վերանայումը՝ նոր աշխարհաքաղականութեանը համապատասխան եւ Ատրպեյճանն այդ դէպքում ակնյայտ օբիեկտ է: Ատրպեյճանը ստեղծուել է նաև թի վրայ: Չկայ նաև չկայ Ատրպեյճան: «ԼՐԱԳԻՐ»

### Իշխանական Ուղերձ՝ Աշոտեանի Շուրթերով

**ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ**

Ներկայումս Հայաստանի ելքը ԵՏՄ-ից երկրի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններից չէ: Այդ մասին այսօր՝ լրագրողների հետ հանդիպման ընթացքում, յայտնել է Հայաստանի Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ, ՀՀ խորհրդարանի արտաքին գործերի մշտական յանձնաժողովի ղեկավար Արմէն Աշոտեանը:

Ուշագրաւ է, որ Աշոտեանը սկզբունքօրէն ոչ թէ քննադատում է «Ելքի» նախաձեռնութիւնը, դա համարում անիրատեսական կամ ոչ աղեկվատ, այլ ընդամէնն արձանագրում է, որ ԵՏՄ-ում Հայաստանի անդամութեան չեղարկումն առաջնահերթութիւնն չէ: Ընդ որում, երբ որեւէ հարց առաջնահերթութիւնն չէ, պարտադիր չէ, որ դրա նկատմամբ անպայման բացասական կամ մերժողական վերաբերմունք լինի:

Ըստ ամենայնի, իշխանութիւններն որոշել են ոչ թէ թուաբանական մեծամասնութեան «կացնային» տրամաբանութեամբ մերժել «Ելքի» նախաձեռնութիւնը, այլ հակառակը՝ այն ինչքան հնարաւոր է՝ երկար պահել օրակարգում, որպէս յաղթանակօրէն օգտագործել արտաքին քաղաքական կեդրոնների հետ յարաբերութիւններում:

Իհարկէ, միամիտ չլինենք՝ կարծելու համար, որ Հայաստանի քրէաօլիգարխիկ իշխանութիւնը կարող է նման սկզբունքային հարցում հակադրուել Մոսկուային, մանաւանդ, որ եւրասիականութիւնը ոչ միայն կոնկրետ կառույց է, այլ առաջին հերթին՝ մտածողութիւն, արժէքային համակարգ, որը հարգատ է նաև Հայաստանի իշխանութիւններին: Ու շատ յաճախ մենք գործունենք հենց Հայաստանի իշխանութեան հարիստական ցանկութիւնների, քան՝ Մոսկուայի հարկադրանքի հետ, որովհետեւ, ի տարբերութիւն Եւրոպայի, եւրասիական տարածքում որեւէ մէկն օրինական ընտրութիւնների անցկացման կամ կոռուպցիայի դեմ պայքարի պահանջ չի դնում: Այնպէս որ՝ նոյնիսկ տեսականօրէն բացառում ենք, որ Հայաստանի այսօրուայ իշխանութիւնը նախաձեռնի ԵՏՄ-ից դուրս գալու գործընթաց կամ աջակցի նման գործընթացի:

Միւս կողմից՝ հայ-ուսական յարաբերութիւնների նշաձողն այսօր այնքան ցածր է, որ իշխանութիւնները հարկադրուած են ինչ-որ քայլեր անել՝ սեփական սուբիեկտիւնն ամբողջովին չկորցնելու համար: Երբ Երեւանը դիւանագիտական խողովակներով կամ երկչոտ հրապարակային յայտարարութիւններով փորձում է Ռուսաստանին հետ պահել Ատրպեյճանին սպառազինելու քաղաքականութիւնից, սակայն Մոսկուան ու Պաքուն խօսում են մատակարարումների նոր՝ 2-3 միլարդանոց պայմանագրի մասին, ապա Երեւանը պարտաւոր է թէկուզեցուցադրաբար հակացնել, որ սպառազինութիւն կարող է ձեռք բերել Չինաստանից կամ նոյնիսկ՝ Իսրայէլից: Չնայած նախագահի ու վարչապետի վստահ յայտարարութիւններին՝ Երեւանում ամենեւին էլ վստահ չեն, որ Մոսկուան վերջին պահին չի խոչընդոտի Եւրամիութեան եւ Հայաստանի միջև շրջանակային նոր համաձայնագրի ստորագրմանը:

Այս համատեքստում «Ելքի» նախաձեռնութիւնը ճիշտ ժամանակին էր, մնում է՝ իշխանութիւնները կարողանան ճկուն վարքագիծ ցուցաբերել եւ օգտուել ստեղծուած իրավիճակից: Օրինակ՝ Գազիկ Ծառուկեանը ԵՏՄ-ի համոզված կողմնակից է, սակայն այսօր հասկացրել է, որ իր խմբակցութիւնը պատրաստ է առնուազն հանգամանալից քննարկել «Ելքի» նախաձեռնութիւնը:

Երբ Աշոտեանն ասում է, որ ներկայումս Հայաստանի ելքը ԵՏՄ-ից երկրի արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններից չէ՝ նրա խնդիրն ոչ թէ ընդդիմութեան նախաձեռնութեան հանդէպ մերժողական վերաբերմունք դրսեւորելն է, այլ մոսկովեան ինչ-որ շրջանակների հակացնելը, որ եթէ Մոսկուայի տարածաշրջանային քաղաքականութիւնը չվերանայուի, ապա շատ հնարաւոր է, որ «Ելքի» նախագիծը Երեւանի օրակարգում կը դառնայ առաջնահերթութիւն: Եթէ սա ոչ թէ Աշոտեանի մասնաւոր, այլ իշխանութեան տակտիկան է, դա միայն ողջունելի է:

Այլ բան, որ մարտավարութիւնը կարող է արդիւնաւէտ լինել, եթէ իշխանութիւններն այն օգտագործեն ոչ միայն օտար մայրաքաղաքներին մեսիջներ հասցեագրելու համար, այլ իսկապէս ներքին լուրջ քաղաքական դիսկուրս ծաւալեն՝ համակարգի, նրա կողմից ընդունուող որոշումների որակը բարձրացնելու ուղղութեամբ: ԵՏՄ-ում Հայաստանի գտնուելը չէ սարսափելի, այլ այն, որ մեր էլիտան իրեն գրկել է մտածելու, այլընտրանքներ գտնելու ընդունակութիւնից:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

### Լեւոն Մկրտչեանը «Սարքել» է Սերժ Սարգսեանի Գլխին, Թէ՛ Հարուածն Իր Վրայ Վերցրել

**ԱՆԻ ՍԱՉԱԿԵԱՆ**

Կրթութեան, գիտութեան դաշնակցական նախարար Լեւոն Մկրտչեանը, փաստօրէն, կրթութեան ոլորտից կիլոմետրերով հեռու մէկն է: Հրագրանի տիրահաճախ քաղաքապետի նոյնքան տիրահաճախ որդուն պարգեւատրելու առիթով պարոն նախարարի մեկնաբանութիւն-արդարացումները շնորհակալ են: Պարոն Մկրտչեանը յայտարարել է, որ քաղաքապետի որդին մետալը ստացել է իր ցուցաբերած գիտելիքների համար, եւ ամենակարեւորը՝ Լեւոն Մկրտչեանը յայտարարել է, որ Սերժ Սարգսեանը տեղեակ չի եղել, երբ աշակերտներին իր սուած պարգեւների շարքում պարգեւատրել է նաև Արամ Դանիէլեանի որդուն:

Նախարարն ասել է, որ ընդհանուր ցանկով պարգեւատրման ենթակայ աշակերտների անուններն իրենք են ներկայացրել: Ստացւում է, որ Լեւոն Մկրտչեանը կամ նրանք, որոնք կազմել են այդ

ցանկը, այսպէս ասած, «սարքել» են Սերժ Սարգսեանի գլխին, վերջինիս դրել, մեղմ ասած, աննախաձեռն վիճակում: Կամ էլ աղմուկից յետոյ դաշնակ նախարարը հարկադրուած իր վրայ է ընդունել սուխները: Քանի որ յիշեցնենք՝ Հրագրանի քաղաքապետի անչափահաս որդին կասկածուած է Հրագրանի 58-ամեայ մի քաղաքացու մահացուելը վրաբերել են թարկելու մէջ:

Շատերը կասկած չունէին, որ անչափասահ երեխային կը ձեռքարկուեն իր յանցաւոր «չարածճիւղութեան» համար, կամ գոնէ հօրը քաղաքական-բարոյական պատասխանատուութեան կ'ենթարկէին պաշտօնական դիրքը չարաշահելու, ծառայողական մեքենան անչափահաս որդուն տալու համար, բայց ոչ մի պատիժ էլ տեղի չունեցաւ: Տղան պայմանականապէս ստացաւ, այլրն էլ շարունակուած է քաղաքապետի իր լիազօ-

**Մասիս**  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԷ ԱՏԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Անընդունելի է Սերժ Սարգսեանի իշխանութեան Երկարաձգում Վարչապետի Պաշտօնին» Արամ Սարգսեան

Սերժ Սարգսեանի վարչապետ դառնալու ծրագիրը խափանելու հարցն ընդդիմադիր «ԵԼՔ» դաշինքի օրակարգին մէջ չկայ: Այս մասին «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին շեշտած է խմբակցութեան պատգամաւոր Արամ Սարգսեան, միաժամանակ շեշտելով, որ «ԵԼՔ»-ի համար միանշանակ անընդունելի է Սերժ Սարգսեանի իշխանութեան երկարաձգում վարչապետի պաշտօնին:



Պատգամաւոր Արամ Սարգսեան

Հետեւութիւններ անել: Հիմա ով կ'ասի, որ այսօրուանից գործընթաց է պէտք սկսել՝ մոպլիթագնելու, համախմբելու, ես դա չեմ ընդունի, ես դրան չեմ հաւատում: Ինչո՞ւ, որովհետեւ ես բազմաթիւ անգամներ, գոնէ երկու անգամ, անցել եմ այդ փրոցէտով եւ արդիւնքի չեմ հասել: Հանրութիւնն ինքը որոշակի իմփուլներ պիտի տայ: Մենք 100 հազար եւ աւելի մեզ քուէ տուած մարդիկ ունենք, եւ չենք կարող եթէնքերի վրայ փլաններ կառուցել»,- «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է Արամ Սարգսեան:

Ան նշած է նաեւ, թէ շատ կ'ուզէ, որ Սերժ Սարգսեան այս անգամ պահէ իր խոստումը եւ, ինչպէս յայտարարած էր 2015 թուականին կայացած սահմանադրական հանրաքուէն առաջ, ո'չ վարչապետ դառնայ, ո'չ Ազգային ժողովի նախագահ, ոչ ալ նախագահ Հայաստանի կրնար հետեւիլ Ռուսիոյ, Ղազախստանի, Պելաուսի եւ Ատրպէյճանի օրինակին:

Սակայն, քանի տակաւին Սարգսեան նման մտադրութեան մասին չէ յայտարարած, ենթադրութիւններու հիման վրայ իրենք քայլեր ձեռնարկել չեն կրնար, ըսած է «ԵԼՔ»-ի ղեկավար անդամը: Յիշեցնենք, որ անցեալ Յունիսին «ԵԼՔ» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեան, անդրադառնալով վարչապետի պաշտօնին իշխանութիւնը երկարաձգելու Սերժ Սարգսեանի հնարաւոր ծրագիրներուն, յայտարարած էր, թէ Հանրապետականը ետ պիտի կանգնի այդ քայլէն, եթէ տեսնէ, որ ժողովուրդը պատրաստ է դուրս գալ փողոց: Արամ Սարգսեան ալ աւելցուցած էր, թէ անհրաժեշտութեան պարագային իրենք պատրաստ են ոտքի հանել ժողովուրդը, Սերժ Սարգսեանին այդ ծրագիրը խափանելու համար:

«Այս փուլում, քանի դեռ Սերժ Սարգսեանը չի յայտարարել, որ ինքը միանշանակ նման մտադրութիւն ունի, քանի դեռ այդ ամէնը ենթադրութիւններ են, աւելին ասել, աւելին անել մենք չենք կարող: Մենք լուրջ քաղաքական ուժ ենք եւ քոնքրէթ փաստերից կարող ենք

Ծառուկեան Զի Բացառեր Հանրապետականին Հետ Դաշինքը

Խորհրդարանական «Ծառուկեան» խմբակցութեան ղեկավար, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեան չի բացառեր, որ յառաջիկային իշխող Հանրապետականին հետ կրնայ դաշինք կազմել: «Ազատութեան» հարցին ի պատասխան Ծառուկեան յայտնած է, թէ կեանքին մէջ ոչինչ կը բացառէ:



«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեան

Խորհրդարանական ընտրութիւններու քարոզարշաւի ժամանակ ԲՀԿ-ականները կը վստահեցնէին, որ Ծառուկեան Հանրապետականին հետ որեւէ պարագայի դաշինք պիտի չկազմէ: Մինչդեռ Ծառուկեան մանրամասնած էր, որ եթէ դաշինք կազմողները համաձայնին, որ իր 15 կէտերը կատարուին, ուրեմն կը կազմէ, եթէ չէ՝ ոչ մէկուն հետ կը կազմէ:

«Բացառում էք, որ դուք Հանրապետականի հետ կողմից կը կազմէք», - այսօր «Ազատութեան» այս հարցին «Ծառուկեան» դաշինքի առաջնորդը արձագանգած է. - «Ես կեանքում ոչ մի բան չեմ բացառում, բայց երբ որ լինի, ես ասում եմ՝ կարեւորը՝ իմ խօսքը, խոստումը իմ ժողովրդին՝ ես դա պահելու եմ, պահպանելու եմ»: Թէեւ Ծառուկեան չի բացառ-

ուր, որ Հանրապետականին հետ յառաջիկային կրնայ դաշինք կազմել, սակայն այնուամենայնիւ յստակ պատասխան չէ տուած, թէ արդեօք կը ցանկա՞յ, որ 2018-ի Ապրիլին ետք Սերժ Սարգսեան որպէս վարչապետ շարունակէ պաշտօնավարել: Ծառուկեան պարբերաբար կը կրկնէր, թէ քանի որ ժողովուրդի մեծամասնութիւնն իր ձայնը տուած է Հանրապետականին, ուրեմն այդ ուժն ալ պիտի որոշէ, թէ ով պիտի ըլլայ վարչապետը:

Կրթութեան Նախարարը Կը Պնդէ Որ Նախագահը Տեղեակ չէր, Որ Կը Պարգեւատրէ Մահացու Վրաերթի Հեղինակը

Կրթութեան նախարարի պնդմամբ, նախագահ Սերժ Սարգսեան տեղեակ չէ եղած, որ իր կողմէ օրերս պարգեւատրուած աշակերտներէն է Հրազդանի հանրապետական քաղաքապետ Արամ Դանիէլեանի որդին՝ Ռազմիկ Դանիէլեանը, որուն դէմ մեղադրանք ներկայացուած է 58-ամեայ տղամարդը մահացու վրաերթի ենթարկելու մէջ:



«Ընդհանուր ցանկով մենք ենք ներկայացրել պարգեւատրուող աշակերտներին», - յայտարարած է Կրթութեան եւ գիտութեան նախարար Լեւոն Մկրտչեան: - «Յանկ ենք ներկայացնում: Նախագահը ինչո՞ւ պիտի իմանայ, կամ չիմանայ, չէ՞ որ առաջադիմութեան համար մետալ է տրուում»:

դանի քաղաքապետարանին պատկանող «Նիսան» մակնիշի ինքնաշարժը, խախտած էր ճանապարհային երթեւեկութեան կանոնները եւ վրաերթի ենթարկած ճամբան հատող Վալերի Թորոսեանը: Վերջինս մարմնական վնասուածքներով տեղափոխուած էր «Հրազդան» բժշկական կեդրոն, ուր, գիտակցութեան չզալով, մահացած էր: Դանիէլեանի դէմ մեղադրանք ներկայացուած էր, սակայն ան ստորագրութեամբ ազատ արձակուած էր:

29 Օգոստոսին Սերժ Սարգսեան ոսկէ մետալներ ու գովասանագիրքեր յանձնած էր բարձր յառաջդիմութիւն ցուցաբերած խումբ կը աշակերտներու, անոց շարքին Հրազդանի քաղաքապետի որդիին: 16-ամեայ Ռազմիկ Դանիէլեանի անունը լրատուամիջոցներու կողմէ հրապարակուեցաւ երեք ամիս առաջ, երբ Քննչական կոմիտէի համաձայն, Հրազդան բնակող պատանին, 8 Յունիսին վարելով Հրազ-

Իրաւապաշտպան Ժաննա Ալեքսանեանի խօսքով, պարգեւատրելով Հրազդանի քաղաքապետի որդին, նախագահ Սարգսեան ուղերձ յղած է իրաւապահ մարմիններուն, որ անպատիժ ձգեն պատանին:

Կարծուեցաւ «ՍԱՍ»-ի Զայնագրութեան Փաստով Յարուցուած Քրեական Գործը

Յատուկ Քննչական Մասնաշաղկերը որոշում կայացուցած է կարճել «ՍԱՍ»-ի ժողովի ձայնագրութեան փաստով յարուցուած քրեական գործը՝ «յանցակազմի բացակայութեան հիմքով»:

«ՍԱՍ»-ի Կազմէն Դուրս Գալու «ԵԼՔ»-ի Նախաձեռնութիւնը Զի Համապատասխաներ Երկրի Շահերուն» Աշոտեան

«ՍԱՍ»-ի Կազմէն Դուրս Գալու «ԵԼՔ»-ի Նախաձեռնութիւնը Զի Համապատասխաներ Երկրի Շահերուն» Աշոտեան

«Այդ յայտարարութիւնը պէտք է քննարկուի համապատասխան յանձնաժողովում: Դեռ նախագիծը չենք ստացել՝ որպէս թեքսթ, բայց ընդհանուր առմամբ քաղաքական տեսակէտից մեկնաբանեմ՝ կարծում եմ՝ այդ փաստաթուղթը չի համապատասխանում Հայաստանի արտաքին քաղաքական եւ արտաքին տնտեսական շահերին եւ մեր արտաքին քաղաքականութեան գերակայութեան շրջանակներում չէ», - այսօր խորհրդարանին մէջ լրագրողներուն յայտնած է ԱԺ արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ Արմէն Աշոտեան, անդրադառնալով «ԵԼՔ»-ի ԵԱՏՄ-էն դուրս գալու նախաձեռնութեան: Ան նշած է, որ երբ բնագիրը տեսնէ, աւելի մանրամասն գնահատական պիտի տայ, բայց անկէ իր քաղաքական գնահատականը չի փոխուիր:



ԱԺ արտաքին յանձնաժողովի նախագահ Արմէն Աշոտեան

արտաքին կապերի յանձնաժողովը պատրաստում է նոր գեկոյց արեւելեան գործընկերութեան հետ կապուած, որտեղ կայ նաեւ անդրադարձ ու ակնկալիք նոր ստորագրուելիք փաստաթղթի վերաբերեալ», - նշած է Աշոտեան:

Արմէն Աշոտեան անդրադարձած է նաեւ այն հարցին, թէ Եւրոմիութեան հետ նոր փաստաթուղթի ստորագրման համար ի՞նչ խոչընդոտներ կրնան առաջանալ: «Բացարձակ որեւէ խոչընդոտ չեմ տեսնում: Նախագահը լիարժէք անդրադարձել է այս հարցին: Մօտ ապագայում նման քննարկումներ Եւրոպական խորհրդարանի շրջանակներում կը լինեն: Ինձ հասած տեղեկութիւններով՝ Եւրպական խորհրդարանի

Հարցին, թէ փաստաթուղթը նախաստորագրուած է, ինչո՞ւ տակաւին չի հրապարակուիր, Արմէն Աշոտեան պատասխանած է. «Եւրոպացի իմ գործընկերները նոյնպէս այս փաստաթուղթը չեն տեսել, որովհետեւ դեռ շարունակուում են որոշակի խմբագրական աշխատանքները: Որքանով ինձ բացատրել են Պրիւսեիում, խմբագրական աշխատանքները տեխնիկական բնույթի են, որոնք չեն փոխում բովանդակութիւնը: Փաստաթուղթը վստահաբար թաքուցւած չէ»:

Մամուլի տեղեկութիւններով, այդ ժողովը վարած է պատգամաւոր Արտակ Սարգսեանի աւագ եղբայրը՝ Արամ Սարգսեան: Հանրապետական կուսակցութեան թեկնածու Արտակ Սարգսեան 2 Ապրիլին կայացած խորհրդարանական ընտրութիւններուն Հանրապետական կուսակցութեան համար ապահոված է մօտ 12 հազար ձայն:

# ԼՈՒՐԵՐ

## Խաղաղ Ցուցարարներու Վրայ Յարձակում Գործած Էրտողանի Կողմնակիցները Ուաշինգթոնի Դատարանի Առջեւ Կանգնած են

ԱՄՆ-ի մօտ թուրքիոյ դեսպալանի կեցավայրին դիմաց խաղաղ ցուցարարներու դէմ յարձակում իրականացնելու դէպքին առթիւ ձերբակալուած երկու թուրքի գործող Ուաշինգթոնի մէջ 7 Սեպտեմբերին տեղի ունեցած է առաջին դատական նիստը: Ձերբակալուած ամերիկացիներու թուրքերը՝ 45-ամեայ Սինան Նարին եւ 50-ամեայ Էլուփ Երլտըրըմ յայտարարած են, որ չեն ընդունիր իրենց դէմ ներկայացուած մեղադրանքները: Այս մասին կը յայտնէ «Washington Times»:



Թուրքերը դատարան բերուած են ձեռքերն ու ոտքերը շղթայուած: Էրտողանի կողմնակիցները հրաժարած են արագ դատավարութեան իրենց իրաւունքէն, թոյլ տալով պաշտպանուող կողմի իրաւապաշտպաններուն մինչեւ յաջորդ դատական նիստը՝ 10 Հոկտեմբերը ուսումնասիրել ներկայացուած մեղադրանքները:

Երլտըրըմ եւ Նարին կը մեղադրուին ատելութեան շարժառիթներով յարձակում գործելու մէջ, բան մը, որ անոնց պատիժը կրնայ 1.5 անգամով աւելցնել: Երկու տղամարդոց դէմ ներկայացուած են նաեւ կանխամտածուած բռնութեան յանցագործութիւն իրականացնելու մեղադրանքներ՝ քրէօրէն պատժելի յանցանք, որ կը նախատեսէ մինչեւ 15 տարուայ ազատազրկում:

Դատական լսումներուն մասնակցած է նաեւ թուրքիոյ դեսպալանութեան ներկայացուցիչը, որ, սա-

կայն, հրաժարած է մեկնաբանութիւն տալ:

Երլտըրըմ ու Նարին թուրքիոյ եւ Միացեալ Նահանգներու քաղաքացիներ են: Անոնք երկուքն են այն 19 անձերէն, որոնց դէմ Ուաշինգթոնի դատարանները մեղադրանք առաջադրած է էրտողանի այցի ժամանակ խաղաղ ցուցարարներու վրայ յարձակում իրականացնելու գործով: 19 անձերէն 15-ը էրտողանի թիկնազօրի անդամներն են:

Թուրքիոյ նախագահ էրտողան յաջորդ շաբաթ պիտի այցելէ Նիւ Եորք՝ մասնակցելու համար ՄԱԿ-ի Գլխաւոր Ժողովի նստաշրջանի բացման: Տակաւին յայտնի չէ, թէ արդեօք Ուաշինգթոնի մէջ ծեծկռտուքին մասնակցած անոր թիկնազօրի անդամները պիտի ուղեկցի՞ր իրեն, թէ ոչ:

Ուաշինգթոնի ոստիկանապետ Փիթըր Նիւշեմ 15 Յունիսին մամլոյ ասուլիսի ժամանակ յայտարարած էր, որ եթէ թիկնազօրի այդ անդամները վերադառնան ԱՄՆ, անոնք դիւանագիտական անձեռնմխելիութիւն պիտի չունենան եւ ժամանելուն պէս պիտի ձերբակալուին:

## Բակօ Սահակեան Երրորդ Անգամ Ստանձնեց ԼՂ Նախագահի Պաշտօնը

Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ տեղի ունեցաւ Ղարաբաղի վերընտրուած նախագահ Բակօ Սահակեանի երդմնակալութեան արարողութիւնը: 57-ամեայ Սահակեան այս պաշտօնը կը ստանձնէ երրորդ անգամ:

Նախագահի երդմնակալութիւնը տեղի ունեցաւ Ղարաբաղի խորհրդարանի յատուկ նիստի ժամանակ, Ազգային ժողովի նիստերու դահլիճին մէջ: 17-րդ դարու Աւետարանի եւ Ղարաբաղի Սահմանադրութեան վրայ Սահակեան երդուեց պահպանել ինքնիշխանութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը՝ «Ստանձնելով Արցախի Հանրապետութեան նախագահի պաշտօնը՝ երդուում եմ անվերապահօրէն կատարել Սահմանադրութեան պահանջները, յարգել մարդու եւ քաղաքացու իրաւունքներն ու ազատութիւնները, ապահովել Հանրապետութեան ինքնիշխանութիւնը, անկախութիւնը, տարածքային ամբողջականութիւնը եւ անվտանգութիւնը՝ ի փառս Արցախի Հանրապետութեան եւ ի բարօրութիւն Արցախի ժողովրդի»:

Այս տարուան սկիզբը կայացած Սահմանադրական փոփո-

խութիւններէն ետք Ղարաբաղ անցում կատարեց կառավարման նախագահական համակարգի: Յառաջիկայ երեք տարիներու ընթացքին Լեռնային Ղարաբաղը պիտի ղեկավարուի անցումային փուլի ռեժիմով:

Անցումային նախագահն ընտրելու իրաւունքը խորհրդարանին էր, որ այս տարուայ Յունիսի 19-ին մեծամասնութեան ձայներով այդ պաշտօնին համար վերընտրեց Բակօ Սահակեանը:

Վերընտրուելուն առթիւ շնորհակտարանքներ ստանալէ ետք Բակօ Սահակեան ելոյթով հանդէս եկաւ, յայտարարելով, որ ուշադրութիւն պիտի դարձնէ անվտանգութեան, բարեկեցութեան, ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքներուն, պիտի շարունակէ զարգացնել տնտեսութիւնը. «Մենք անելու ենք ամէն ինչ՝ հայ ժողովրդի պատիւն ու արժանապատուութիւնը բարձր պահելու: Եւ այդ ճանապարհին ես մեզ բոլորիս յաջողութիւն եմ ցանկանում»:

Նիստի աւարտին Ղարաբաղի խորհրդարանի ղեկավար Աշոտ Ղուլեան ընդգծեց, որ երդմնակալութեան հանդիսաւոր միջոցառմամբ երկրին մէջ քաղաքական նոր հանգրուանի սկիզբ կը դրուի:

## Ալիեւ Ներում Շնորհեց Ղարաբաղ Այցելած Լրագրող Լափշինին



Ալեքսանտր Լափշին անցեալ Փետրուարին Պելառուսի կողմէ Ատրպէյճանի յանձնուելէ ետք

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ ներում շնորհեց Իսրայէլի եւ Ռուսիոյ քաղաքացի, պլուկըր Ալեքսանտր Լափշինին, որ երեք տարուայ ազատազրկման դատապարտուած էր տարիներ առաջ առանց Պաքուի արտօնութեան Ղարաբաղ այցելելուն համար: Ալիեւի հրամանագիրը ուժի մէջ մտած է հրապարակման պահէն, եւ, Լափշինի փաստաբանին խօսքով, իր պաշտպանեալը կրնայ ատրպէյճանական բանտէն դուրս գալ արդէն այսօր կամ ամենաուշը՝ վաղը:

Մեկնաբանելով շատերու համար անակնկալ այս որոշումը, Ատրպէյճանի նախագահի հասարակական-քաղաքական հարցերով օգնական Ալի Հասանով այսօր յայտարարած է, թէ պաշտօնական Պաքու շատոնց պատրաստ էր պլուկըրը արտայանձնել Իսրայէլին, սակայն, գործընթացը ձգձգուած է այդ երկրի իշխանութիւններուն մեղքով: «Որպէս արդիւնք երէկ տհաճ դէպք արձանագրուեցաւ, Լափշին կալանավայրին մէջ անձնասպանութեան փորձ կատարած է, որ սակայն կանխուած է բանտապահներու զգոնութեան շնորհիւ: Լափշինին շտապ օգնութիւն ցուցաբերուած է, այժմ ան բժշկական օգնութեան տակ է», - յայտարարած է Հասանով:

Պլուկըրի փաստաբան Էտուարտ Չերնին, մինչդեռ, ռուսական «Interfax»-ին յայտնած է, թէ որեւէ բանէ տեղեակ չէ իր պաշտպանելին անձնասպանութեան փորձին մասին: Այս պահուն յստակ է միայն այն, որ պլուկըրը պիտի յանձնուի Իսրայէլի իշխանութիւններուն: «Այժմ Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարութիւնն ու Պաքուի մէջ Իսրայէլի դեսպանատունը կ'աշ-

խտին Լափշինի արտայանձման ուղղութեամբ», - ժամեր առաջ յայտարարած է նախագահ Ալիեւի օգնական Ալի Հասանով:

Ուշագրաւ է, որ Լափշինն ազատ արձակելու որոշումը Պաքու կայացուց Պաշտպանութեան նախարար Զաքիր Հասանովի Իսրայէլ կատարելիք քննարկումին, ուր, ըստ պաշտօնական հարցազրուումներու, նախատեսուած են հանդիպումներ այդ երկրի Պաշտպանութեան նախարար Աւիկտոր Լիպըրմանի, ինչպէս նաեւ ռազմարդիւնաբերական ոլորտի ընկերութիւններու ներկայացուցիչներու հետ:

Նշենք, որ Ալիեւ այսօր գլխաւորութեան եւս մէկ ցուցադրական գործողութիւն իրականացուցած է, հրահանգելով քննել «Թուրան» լրատուական գործակալութեան ղեկավար Մեհման Ալիեւի խափանման միջոցը: Երկրի ղեկավարի այս հրահանգին ժամեր անց զատարանը որոշած է քննչական մեկուսարանէն ազատ արձակել եւ տնային կալանք սահմանել ընդդիմադիր լրագրողին նկատմամբ, որ մեղադրուած է հարկերէ խուսափելու մէջ: Դատարանը, ըստ ատրպէյճանական լրատուամիջոցներուն, որեւէ կերպով չէ հիմնաւորած այդ որոշումը:

Փորձագէտներն ու իրաւապաշտպանները, մինչդեռ, կը պնդեն, որ այս քայլերով Ալիեւ կը փորձէ շեղել հասարակութեան ու միջազգային հանրութեան ուշադրութիւնն անցեալ շաբաթ հրապարակուած աղմկայարուց հետաքննութենէն, որ նոր փաստեր բացայայտած էր Ատրպէյճանի իշխող վարչակազմի բազմամիլիոնային կաշառակերութեան գործարքներուն մասին:

## Երոխորհրդարանը Պիտի Ուսումնասիրէ

Շարունակուած էջ 1-էն

թեան դէմ պայքարի մեթոտներ: Երոխորհրդարանի տարածած յայտարարութեան համաձայն, Ատրպէյճանի մասնակցութեամբ 3 միլիառ տոլարնոց կաշառակերութեան խաչատուակութիւնը պայթելէն ետք, 96 եւրոպացի պատգամաւորներ առաջարկած են փոփոխութիւններ կատարել այս փաստաթուղթին մէջ:

«Ատրպէյճանական լուսցքատուն» անուանումն ստացած կաշառակերութեան խաչատուակութեան ուսումնասիրութեամբ պարզուած

հանգամանքներու արդիւնքով Եւրոխորհրդարանը խստօրէն կը քննադատէ եւրոպական որոշումներ կայացնողներուն վրայ ազդեցութիւն ունենալու Ատրպէյճանի քայլերը:

Նախատեսուած է իրականացնել համակողմանի ուսումնասիրութիւն եւրոպական գործիչներու վրայ հնարաւոր ազդեցութիւններն ուսումնասիրելու ուղղութեամբ: Եւրոխորհրդարանը եւրոպական կառավարութեանը կոչ ուղղած է ձեռնարկել խստագոյն քայլեր, կանխելու համար կաշառակերութեան երեւոյթները», - նշուած է յայտարարութեան մէջ:

### Կարօ Փայլան իր 4 Կուսակիցներուն Յետ Նստացոյց Սկսած Է Թուրքիոյ Սահմանադրական Դատարանի Շէնքին Մէջ



Թուրքիոյ քրտամէտ ժողովուրդներու դեմոկրատական (HDP) կուսակցութեան հայ պատգամաւոր Կարօ Փայլան իր 4 կուսակիցներու հետ բողոքի նստացոյց սկսած է Թուրքիոյ Սահմանադրական դատարանի շէնքին մէջ: Այս մասին ան գրած է Թուրքիոյ թերթերէն իր էջին:

«Մեր պատգամաւորները Սահմանադրական դատարանի շէնքին մէջ սկսան խիղճի եւ արդարութեան պատուոյ պահակութիւնը», - գրած է ան:

Նշենք, որ Փայլան ու իր կուսակիցները կը պահանջեն ազատ արձակել իրենց բանտարկուած կուսակիցները, այդ թուին՝ կուսակցութեան համանախագահներ Սելախաթթին Տեմիրթաշ եւ Ֆիզէն Եուքսէքտաղ:

Աւելի վաղ յայտարարուած էր, որ Թուրքիոյ քրտամէտ ժողովուրդներու դեմոկրատական (HDP) կուսակցութեան համանախագահներ Սելախաթթին Տեմիրթաշ եւ Ֆիզէն Եուքսէքտաղի համար՝ 83 տարուայ:

Քիւրտ գործիչները կը մեղադրուին «ահաբեկչական կառույց ստեղծելու եւ ղեկավարելու», «ահաբեկչական կառույցի օգտին քարոզչութիւն կատարելու», «ժողովուրդը ատելութեան եւ թշնամութեան հրահրելու» մէջ:

Քիւրտ գործիչները կը մեղադրուին «ահաբեկչական կառույց ստեղծելու եւ ղեկավարելու», «ահաբեկչական կառույցի օգտին քարոզչութիւն կատարելու», «ժողովուրդը ատելութեան եւ թշնամութեան հրահրելու» մէջ:

Քիւրտ գործիչները կը մեղադրուին «ահաբեկչական կառույց ստեղծելու եւ ղեկավարելու», «ահաբեկչական կառույցի օգտին քարոզչութիւն կատարելու», «ժողովուրդը ատելութեան եւ թշնամութեան հրահրելու» մէջ:

### Ըստ «Ալօս»ի Պոլսոյ Նահանգապետարանը Պատրիարքի Ընտրութիւններուն Միջամտելու Յերթական Փորձը Կը Կատարէ

Պոլսոյ նահանգապետարանը դժգոհութիւն արտայայտած է պատրիարքի ընտրութիւններու կազմակերպչական գործընթացին մէջ ընդգրկուած խումբի անդամներէն, փորձելով կրկին միջամտել ընտրական գործընթացին, կը հաղորդէ «Ալօս»:

Նահանգապետարանէն նշած են, որ խումբի անդամներուն մասնակցութեամբ ընտրութիւն չի կրնար կազմակերպուիլ, հետեւաբար նախաձեռնող խումբը նոր ժողով պիտի գումարէ, նահանգապետարանին հետ ընդհանուր յայտարարի գալու համար:

Նշենք, որ Պոլսոյ Հայոց պատրիարքի ընտրութեան հարցերով զբաղող յատուկ խումբը պատրիարքի տեղապահ Գարեգին Պէքճեանի գլխաւորութեամբ անցեալ ամիս Պոլսոյ նահանգապետարանին դիմում մը յանձնած էր, ընտրութիւնները 13 Դեկտեմբերին կատարելու առաջարկով:

Պատասխանը Հոկտեմբերի 6-ին կը սպասուի:

### Եւրոպացի Դեսպաններուն Համաձայն

#### Շարունակուած էջ 1-էն

հետ հանդիպման ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան ըսած էր, թէ 2013-ին հայկական կողմը կը բանակցէր Ե՛ւ Եւրասիական Տնտեսական Միութեան հետ, Ե՛ւ Եւրամիութեան հետ, որովհետեւ ի սկզբանէ երկու կողմն ալ կ'ըսէին, որ մէկը միւսին չի խանգարեր: «Բայց երբ Եւրամիութիւնն ասաց՝ խանգարում է, մենք ի՞նչ պէտք է անէինք», - հարց տուած էր Սարգսեան:

Հայաստանի մէջ իր առաքելութիւնը աւարտող Ֆրանսայի դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանտիէ, որ եւս կը մասնակցէր մամուլի ասուլիսին, համաձայնելով իր գերմանացի գործընկերոջ հետ,

ըսաւ, որ թէքնիք հարցեր այդ կային: «Բնական է, որ միաժամանակ կարելի չէ գտնուիլ «երկու գոտիներու» մէջ, սակայն այդ չի նշանակեր, որ ինքնիշխան երկիրը չի կրնար ընտրել իր համար համապատասխան տարբերակն ու պարզել հետագայ քայլերը:

«Այն օրը, երբ ստորագրուի Հայաստան-ԵՄ պայմանագիրը, կը կարծեմ, բոլոր նախադրեալները կան անոր համար, այդ ժամանակ Հայաստան կը դառնայ միակ երկիրը, որը ըլլալով ԵՏՄ անդամ, միաժամանակ պայմանագիր կ'ունենայ ԵՄ-ի հետ: Իսկ այդ պայմանագիրը յաւակնոտ, երկխօսութիւններու հեռանկար ունեցող, Հայաստանի համար գործունէութեան լայն հորիզոններ բացող, համարձակ ծրագիր կ'ըլլայ» - ըսաւ Ժան-Ֆրանսուա Շարպանտիէ:

### Տեղեկատուական Զգայացունց Նորութիւններ Իսլամական Պետութեան Մասին



«Լոս Անճելոս Թայմզ» օրաթերթի կիրակնօրեայ համարին մէջ, շահեկան յօդուած մը գրած է Ռ.Ճ. Հոննիկան, որուն մէջ կը բացայայտէ վերջերս Իրաքի եւ Սուրիոյ Իսլամական պետութեան տիրապետութենէն ազատագրուած տարածքներէն ձեռք բերուած տեղեկութիւնները: Անոնց մէջ կան զգայացունց յայտնաբերումներ հազարաւոր անուններու եւ այլ տեղեկատուութիւններու:

Արդարեւ, ամերիկեան գաղտնի սպասարկութեանց վերլուծաբանները խորթափանց ուսումնասիրութիւններ կտարած են եւ տեղեկութիւններ քաղած ռմբակոծուած գրասենեակներէն ձեռք բերուած համակարգիչներէն, ինչպէս նաեւ մահացած ահաբեկիչներու բջիջային հեռախօսներու վրայէն: Այս նոր յայտնաբերումներուն որպէս հետեւանք ԱՄՆ-ի պատկան սպասարկութիւնները, անցնող երկու ամիսներու ընթացքին, հազարաւոր նոր անուններ աւելցուցած են Իսլամական Պետութեան գործողութեանց մասնակիցներու ցանկին վրայ: Նոր մանրամասնութիւններ յայտնաբերուած են Իսլամական Պետութեան կողմէ միջազգային մակարդակի վրայ նախաձեռնուած ահաբեկչական գործողութեանց կապակցութեամբ:

Ներկայիս, Ինթըրբոլ կասկածելիներու իր նոր ցանկը համալրած է 19,000 անուններով, որոնք փոխանցուած են օդակայաններն եւ սահմանակէտերը, առ ի զգուշութիւն ահաբեկիչներու ներթափանցումներէն:

Նշանակալից տեղեկատուութիւն մըն է նաեւ 2014ին ի վեր Իսլամական Պետութեան (Տահէշ) ահաբեկիչներուն իրենց մասնակցութիւնը բերած օտարահպատակներու ինքնութիւնները: Արդարեւ այժմ ծանօթ են անոնց ոչ միայն անունները, այլեւ պատկանելիութիւններն ու հասցէները: Մահացած ահաբեկիչի մը քովէն գտնուած բջիջային հեռախօս մը՝ կրցած է բաւականաչափ կուտակուած տեղեկութիւն փոխանցել հակահաբեկչական հետազոտութիւն կատարողներուն, որոնց

շնորհիւ կատարուած են ձեռքարկութիւններ առ նուազն 15 երկիրներու մէջ՝ Եւրոպա, Միջին Արեւելք, Հարաւ Արեւելեան Ասիոյ, Աֆրիկէի, Լատինական Ամերիկայի եւ Գանատայի մէջ:

ԱՄՆ-ի պատասխանատուները կ'ըսեն թէ Իսլամական Պետութիւնը՝ 2014 թուականին գրաւած իր հողատարածքին 60 առ հարիւրն այժմ կորսնցուցած է իսկ իր հահաբեկիչներուն թիւն ալ իջած է 15,000ի: Ներկայի տեղեկատուութեանց համաձայն անոնք իրենց ոյժերը կեդրոնացուցած են Եփրատի գետի հովիտի կեդրոնական մասերը, որ կը տարածուի Սուրիոյ եւ Իրաքի միջեւ:

Ըստ նախահաշիւի 8000 կուռողներ փոխադրուած են հովիտի շրջանը, որ 150 մղոն հեռավորութիւն ունի Տէր Ջօրէն (Սուրիոյ Արեւելքը) եւ Ռաւաքին (Իրաքի Արեւմտեքը): Այս խմբաւորումին մաս կը կազմեն Չոկատներու ղեկավարները, անոնց ընտանիքները, ինչպէս նաեւ օգնականներն ու վարչական ղեկավարները:

Անցնող տարուան ընթացքին ԱՄՆ-ի ռազմական յատուկ գործողութիւններու Չոկատները սպանած են երեք ղեկավարներ եւ աւելի քան 35 այլ հրամանատարներ:

Գալով Իսլամական Պետութեան հիմնադիր Ապու Պաքը Պաղատիին, ըստ զօրավարի տեղակալ Ստեփան Թաուն Սէնտի որ վերջերս շրջագայութիւն մը կատարած էր այդ վայրերուն մէջ, կը կարծուի թէ թաքնուած է վերոյիշեալ շրջանին մէջ: Իր նախատեսութեամբ ահաբեկիչներու հովիտի վերջին ապաստանարանը իրենց բնաջնջումի թիրախը կրնայ ըլլալ:

Սակայն Ուաշինկթընի ռազմական հարցերու Սուրիոյ շրջանի վերլուծաբան ձէնիֆըր Գաֆարէլլայի համաձայն պատերազմը հեռու է աւարտած ըլլալէ: Իսկ մնացեալ հողատարածքը արագօրէն եւ հեշտութեամբ կարելի չէ վերագրաւել: Նոյնիսկ գրաւելու պարագային ոչ մէկ երաշխիք չի կայ հարցն աւարտած է ըսելու եւ վերջակէտ դնելու:

թեան լայն հորիզոններ բացող, համարձակ ծրագիր կ'ըլլայ» - ըսաւ Ժան-Ֆրանսուա Շարպանտիէ:

Գերմանիոյ դեսպանը յայտնեց, որ Նոյեմբերին ԵՄ-ն պատրաստ է Հայաստանի հետ կնքել համագործակցութեան նոր պայմանագիրը եւ ներկայ պահուն չկայ որեւէ հանգամանք, որ խանգարէ այդ գործընթացին:

«Ես մեծ ջանքով եմ կը նկատեմ նոր համաձայնագիրը եւ կը կարծեմ՝ եթէ այդ ստորագրուի, ապա նոր ու բազմաշերտ հնարաւորութիւններ կ'ընձեռէ ԵՄ-Հայաստան համագործակցութիւնը խորացնելու առումով», - ըսաւ Գերմանիոյ դեսպանը:

ուի, ապա նոր ու բազմաշերտ հնարաւորութիւններ կ'ընձեռէ ԵՄ-Հայաստան համագործակցութիւնը խորացնելու առումով», - ըսաւ Գերմանիոյ դեսպանը:

Յայտնենք որ, Հայաստանի Խորհրդարանէն ներս արեւմտամէտ «ԵՄ» դաշինքը ներկայացուցած է առաջարկութիւն՝ Եւրասիական Տնտեսական Միութեանէն դուրս գալու եւ Եւրոպայի հետ տնտեսական համագործակցութիւնը զարգացնելու ուղղութեամբ:

ՎԵՐԱՍՈՒՏ...



**Զօրացիւք  
Օժանդակե՛նք  
Փրկե՛նք**

Syrian Armenian Relief Fund  
P. O. Box 1948  
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org



ՐԱՖՅԻ ՔԵՆՏԻՐՃԵԱՍ  
ՍԱՐՖ-ի Ատենապետ

Սեպտեմբեր ամիս ... վերամուտ:

2017-2018 դպրոցական տարեշրջանի նոր սկիզբը: Ծնողներ, աշակերտներ եւ ուսուցիչներ մէջ, դասագրքերու փնտրութեամբ, համագործակցութեամբ ընտրութիւն, նոր ձեւեր ու գոյնի պայտուակներ, եւ՝ իւր սարօքն: Իւրաքանչիւր աշակերտ կը պատրաստուի սկսելու նոր տարեշրջան մը, ուսումնական նոր ծրագիր: Շատերու համար առաջին տարին է, մանկապարտէզ, ուրիշներու համար՝ վերջին տարին, շրջանաւարտ, իսկ ուրիշներ, տակաւին, երկար ճանապարհ ունին կտրելիք: Այլ խօսքով, ամէն տարուայ նման այս տարի ալ նոյնն է: Բայց արդեօք նոյնն է՞ պարագան Սուրբոյ հայրութեան երեխաներուն, որոնք, վերջին 6 տարիներու ընթացքին, չունեցան բնականոն վերամուտ, թէկուզ եթէ առիթը ունէին եւ ունեցան յաճախելու դպրոց, բայց ահ ու դողի մէջ, մահն ու սարսափը իրենց ամենօրեայ ճանապարհորդակիցը:

Բայց տեսէք, ճիշդ է ըստածը, «յոյսը ամօթով չի ձգեր»: Յոյսով ու հաւատով ծնողներ իրենց երեխաները զրկեցին դպրոց, որ այս ձախող օրերը «ձմրան նման են կու գան ու կ'երթան, վհատելու չէ վերջ կ'ունենան, կու գան ու կ'երթան»: Նոյն այս յոյսի տեսիլքով, Սուրբ հայր կը շարունակէ նոր սկիզբ կերտելու, վերականգնելու եւ վերանորոգելու քարն ու հողին, որոնք անցնող պատերազմական տարիներուն այս կամ այն ձեւով վնասուած էին:

Ահա նոյն այս յոյսով ու հաւատով անցնող 6 տարիներու ընթացքին, ՍԱՐՖ-ը եւս մօտէն հետեւացաւ Սուրբոյ, ու մանաւանդ՝ Հալէպահայրութեան տաղանակին, ոչ միայն իբրեւ դիտողի դերին մէջ ըլլալու, այլ՝ ի գին ամէն գոհողութեան, նիւթաբարոյական աջակցութիւնը բերելու, որպէսզի հայ մանուկը, երեխան ու պատանին ունենան առիթը յաճա-

խելու դպրոց, սորվելու Մերոպեան այբուբէնը, տեղեակ դառնալու հայոց պատմութեան այն էջերուն, որոնք կը պատմեն Հայու խիզախ կեանքի փորձառութիւնը, որ ոչ մահը, ոչ ալ սուրը մեզ կրնան արգելք ըլլալ շարունակելու Աստուածապարգեւ այս կեանքը:

Այո, լրատուական միջոցները օրէ օր նոր յոյս կը ներշնչեն, ըսելու համար թէ քաղաքական կացութիւնը աւելի կայուն ու ապահով կը դառնայ շրջանէն ներս: Սակայն նշանակէ, թէ այս տարի երեխաները կրնան յաճախել դպրոց առանց ահ ու դողի, վախ ու սարսափի: Այս տարի կարծէք արձունքի փոխարէն ժպիտով եւ ուրախութեամբ դիմաւորելու նոր տարեշրջանը: Վստահաբար կարօտի զգացումներով լեցուն են, որ պիտի տեսնեն իրենց դասընկեր-դասընկերուհիները: Բայց ով գիտէ, մի գուցէ արդէն շատեր հեռացած են Հալէպէն, հաստատուելով Լիբանան, Հայաստան եւ կամ հեռաւոր փեր՝ Գանատա, Աւստրալիա եւ այլ ուր:

Ինչպիսին ալ ըլլան պարագաները, ՍԱՐՖ-ը կը շարունակէ ու պիտի շարունակէ օժանդակել, եւ 3000-է աւելի օգնութիւն ստացած աշակերտներուն թիւը բարձրացնելու, որպէսզի Հայ աշակերտը յաճախէ դպրոց: Ստանայ բարձրագոյն ուսում, նուաճէ բարձունքներ, անով դառնալու վաղուան մարդը, պատրաստ ամէն տեսակի դժուարութիւններ չաղթահարող:

ՍԱՐՖ-ի այս աշխատանքը առաձին աշխատանք մը չէ, այդ բոլորը կը պարտինք մեր սիրելի ժողովուրդի գաւակներուն, որոնք ի գին ամէն գոհողութեան իրենց զրպանները լայն բացին, որպէսզի օժանդակեն Սուրբոյ հայրութեան մեր քոյրերուն եւ եղբայրներուն, մանաւանդ՝ մեր երեխաներուն, որոնք գալիք սերունդն են:

Սեպտեմբեր ամիս... վերամուտ:

Շարունակե՛նք մեր երթը...  
**3. 9. Չեր սիրայօժար նուերները կրնաք ուղղարկել SARF P.O. Box 1948, Glendale, CA 91209**

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ,  
ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, ՏՈՒՐՔԵՐՈՎ ԱՆԳԱՍ  
ԵՐԿԻՐ ՉԵՆ ՊԱՅՈՒՄ

ՍԱՐՏԻՆ ԵՒ ԱՐԱՍԱՅԻՍ  
ԱՍԵԱՍՓԱՍՍՈՐ  
Ճարտարագետներ

Ամառն աւարտուեց, տապը չի նահանջում: «Խորովի անտառ» պետական արգելոցի հրդեհից մնացած որոշ օճախներ դեռ ծխում են: Բնապահպանները չեն հանդարտուում: Նրանք պնդում են, որ կանաչ կորուստն անդառնալի է:

Անցած ամառն էլ աւանդական արձակուրդի ժամանակաշրջանի իր դրսեւորումներն ունեցաւ: Բոլորը ձգտեցին (ովքեր կարողացան) Հայաստանից հեռու հանգստանալ՝ խուսափելով կիզիչ արեւից, խեղդող տապից: Բոլոր պաշտօնեաների նման՝ վարչապետն էլ հանգստացաւ, բայց ոչ Բաղեն-Բաղենում, այլ հարազատ ծննդավայրում՝ Արցախի Հանրապետութեան Աստղաշէն գիւղում: Դա մենք տեսանք, Հայաստանի հեռուստատեսային բոլոր ալիքները շքեղ գովազդում էին: Ամենակարեւորը՝ մամուլը տեղեկացրեց, որ ՀՀ վարչապետ Կարէն Կարապետեանը նաեւ բարերար է: Նրա ընտանիքը պարբերաբար Արցախի տարբեր դպրոցներին աջակցել է յատկապէս համակարգչային տեխնիկայով, տարիներ առաջ իր պապական տունը վերանորոգելուց բացի, իր միջոցներով բարեկարգել է հայրենի գիւղի ճանապարհները, մշակոյթի տունը: Ապրիլեան պատերազմի օրերին բացուած յատուկ հաշուհամարին 100 հազար տոլար է փոխանցել: Ներդրումներ է կատարել նաեւ Արցախի հիդրոէներգետիկայի բնագաւառում եւ այլն:

Հայաստանում բարերարների պակաս չի գզացում: Հայաստանեան հեռուստատալիքներն ամէն օր կամ օրումէջ մեր աչքն են խոթում, թէ ով որտեղ ինչ է արել: Մի տեղ՝ Գագիկ Ծառուկեանը, մէկ այլ տեղ՝ Ռալֆ Յիրիկեանը, Սամուէլ Ալեքսանեանը... որ մէկին թուարկես:

Մեզ միշտ զուարճացնում ու գայրացնում է ՀՀ պաշտօնական վիճակագրութիւնը:

Պարզում է՝ Հայաստանում ծառայութիւնների ծաւալն աճել է 11.8%-ով, առեւտրի շրջանառութիւնը՝ 12.2, արդիւնաբերական արտադրանքի ծաւալը՝ 12.7, միջին անուանական աշխատավարձը՝ 2.7%-ով (ոչ մի ակնարկ թոշակների մասին): Ինչ խոսք, նվազում էլ կա, այն էլ՝ միայն գյուղատնտեսութեան եւ շինարարութեան ոլորտներում: Մի խօսքով՝ թուիչքաձեւ զարգա-

ցում ենք ապահովել: Սա դեռ տանելի է, բայց Յուլիսի 1-ի դրութեամբ ՀՀ մշտական բնակչութեան թիւը պակասել է 6 հազար 200 մարդով, ծնունդների թիւը, նախորդ տարուայ համեմատ՝ 7%-ով, ամուսնութիւնների՝ 6.5%-ով, ամուսնալուծութիւններն աճել են 11.3%-ով: Պաշտօնապէս աշխատանք փնտրողների թիւը 76 հազարից դարձել է 95 հազար...  
Բարդ գլուխկոտրուկ է, չէ՞. Հայաստանի ծանր սոցիալական վիճակը «բարելաւում», կաթուածահար տնտեսութիւնը «գարգանում է»՝ որեւէ կապ չունենալով ՀՀ քաղաքացիների կենսամակարդակի հետ: Իշխանութիւնների հանդէպ ՀՀ քաղաքացիների չեղած վստահութիւնը, մեղմ ասած՝ գրոյանում է:

Կրկին անդրադառնանք Խոսրովի արգելոցի հրդեհին: Մարման գործընթացը Հայաստանի տկարութեան հերթական վկայութիւնն է: Իշխող վարչախումբը փորձում է ամէն կերպ չարծարծել «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հրդեհի թեման՝ խուսափելով նաեւ պատասխանատուութիւնից: Ի դէպ, ոչ մի պաշտօնեայ չընդհատեց իր արձակուրդը, չվերադարձաւ Հայաստան եւ չղեկավարեց հրդեհաշիջման աշխատանքներն իր պատասխանատուութեան չափով:

Իսկ ՀՀ հեռուստատալիքներն օրնիբուն, աջ ու ձախ յայտնի բարերարների փառաբանութեամբ են զբաղուած: Տհաճ է, երբ աչքը են խոթում բարերարի արածն ու չարածը: Իրականում ոչ թէ մեծարում, այլ աստուածացնում են բարերարին: Մեծահարուստներից մէկի՝ Հայաստանում ահուկի հարստութիւն դիզած Ռոբերտ Քոչարեանի անունը, անկեղծ լինենք, չեն հնչեցնում բարեգործութեան առումով: Պէտք է ենթադրել՝ կա՞մ բարեգործութեամբ ընդհանրապէս չի զբաղուել, կա՞մ «մեծահոգաբար» այդ մասին չի խօսել:

Այնուամենայնիւ, մեզ յայտնի բարեգործներն ինչքան էլ ճոխ ու շուք բարեգործութիւն անեն, նուէր ու պատուով, մրցանակ ու տոնանքներով մետալ բաժանեն, միեւնոյն է՝ Հայաստանի տնտեսութեան գլխին դամոկլեան սրի նման կախուել է հոգեվարքի վտանգը: Բարեգործութիւններով, նուիրատուութիւններով, տուրքերով անգամ երկիր չեն պահում: Առաւել եւս՝ յանկարծ իշխանութիւնների մտքով չանցնի բարերարների կառավարութիւն ձեւափոխել:



**MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



**WELCOME HOME & AUTO INSURANCE**  
Along with all of our other *Trusted Insurance Services*

We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE  
**(818) 500 9305**

### 62-ԱՄԵԱԿ ՄԵԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ



62 տարիներ անցած են 6-7 Սեպտեմբեր 1955 թվականին այսօր: Թուրքիոյ պատմութեան ամօթալի էջերէն մէկը հանդիսացող այդ թուականը եթէ ոչ երկրի հասարակութեան, բայց գոնէ որոշ մտաւորական գանգոտածի մը համար վերջերս դարձած է յիշատակման արժանի օր: Այսպէս ամէն տարի այդ թուականի նախօրեակին գանազան միջոցառումներ կը կազմակերպուին վերջի շրջանը համար կատարուածը: Արդարեւ այս տարի ալ Թուրքիոյ Պատմութեան Հիմնարկը կազմակերպած է շահեկան ասուլիս մը 6-7 Սեպտեմբերին պատահածները մեկնաբանելու մտադրութեամբ: Այս գիտաժողովին իրենց գեղոյցներով կը մասնակցին Կիւլէն Կիւրքան, Ֆոթի Պենլիսոյ եւ Հաքան Եիւճէ: Ասուլիսը առիթ համարելով գրուցեցինք Իսթանպուլի Համալսարանի Քաղաքական Գիտութիւններու Բաժնի դասախօս Կիւլէն Կիւրքանի հետ: Կիւրքան այս մասին բաւական հետաքրքրական հաստատումներ ունի: Ան համոզուած է որ դէպքերը ճակատագրական փուլ մը կը կազմեն մշակոյթի մայրաքաղաք Պոլսոյ պատմութեան մէջ: Ազգային Պետութեան գործընթացին եթէ առաջին հանգրուանը քրիստոնեաներու երկրի տարածքէն ջնջուին էր, ապա երկրորդ կարեւոր գործածը այդ գանգոտածը ինքզինք համեմատաբար աւելի ապահով զգացած Պոլիսէն ալ հեռացնելն էր: Ան այս համոզումէն մեկնելով կը պնդէ թէ սոյն գործողութեան շարունակութիւնը պէտք է համարուի 1964-ին յոյներու արտաքսուումը:

Դասախօսը ունի շատ կարեւոր հաստատումներ նաեւ պատահածներու ուրացման գործընթացին համար: Ան կ'ըսէ թէ «էթնիկ մաքրագործում, ցեղասպանութիւն կամ կոտորածի նման յանցագործութիւններուն կը յաջորդէ ուրացումը: 6-7 Սեպտեմբերի դէպքերուն մէջ մեղաւորի դիրքով յայտնուողները խոր լուծեան մատնուած են, որ կարելի է ուրացում համարել: Բացի այդ շրջանի Ներքին Գործոց Նախարար Նամըք Կետիքէ ոչ ոք հրաժարած է: Պաշտօնակեղծներէ շատեր կարճ ժամանակ անց վերատիրացած են իրենց պաշտօններուն: Թուրքիոյ մէջ 6-7 Սեպտեմբերի դէպքերուն առնչութեամբ իրաւաւորներու մը երբեք չէ եղած»:

Ան նոյնիսկ կը հաւատայ թէ պատահածներու անուանումը անգամ որպէս 6-7 Սեպտեմբերի դէպքեր անընդունելի ուրացում մըն է: «Առանց անունը ճիշդ կոչելու կարելի չէ առերեսումի մասին խօսիլ: Բայց ընդհակառակը մեր երկրին մէջ առերեսումը սպառնալիք մը ըլլալով կը դիտուի եւ մարդիկ կ'ուզեն միայն ու միայն իրենց արդարութեան մասին լսել»:

Հարցազրոյցի շարունակուող բաժիններուն մէջ, երբ թղթակիցը կը հարցնէ թէ արդեօք այս երկիրը այդ դէպքէն տուժածներուն կրցա՞ւ վստահեցնել թէ նման բաներ անգամ մը եւս չեն պատահիր, պատմաբանը այս հարցումին կը պատասխանէ բոլորին մտահոգութիւն պատճառելու արժանի կերպով: «Յիշենք 1894-96-ի հայոց կոտորածները: 1908-ին սահմանադրութիւն հռչակուեցաւ ու հայեր սկսան մտածել թէ այդ օրերը մնացած են



հեռաւոր անցեալի մէջ: Ապա եկած մեծ ցնցումը 1909-ին՝ Ատանայի կոտորածը: Մարդիկ կարծեցին թէ այս կարեւոր ճանապարհորդութեան ընթացքին հաւանական պատահար մըն է կատարուածը: Բայց շուտով վրայ հասաւ 1915-ը: Յոյսեր կային որ հանրապետութեան հռչակումով նոր էջ մը կը բացուի երկրի մէջ: Այդ միջոցին ալ գործադրուիլ սկսաւ բոլորիս ծանօթ թրքացնելու քաղաքականութիւնը: Երկրի փոքրամասնութիւնները արտերկրի հետ գոյացած բոլոր ճգնաժամերուն իրենք զիրենք տեսան պատանդի դիրքին մէջ: Մէկ կողմ դնենք -այսպէս բաներ անգամ մըն ալ չեն պատահիր- համոզումը, ի գորու եղաւ -ամէն վայրկեան կրնայ պատահիլ- վախազու սարսափը»:

Այս առթիւ շահեկան զրոյց մը ունեցանք նաեւ բուրջկամարտիկ Կարպիս Զաքարեանի մենագրութիւնը համարուող «Ո՛ւր ես Կարօ» գիրքի հեղինակ Էմինա Թեմելի հետ: Այս վերջինը հաստատեց թէ ինք առաջին անգամ այս գիրքի նախապատրաստութեան շրջանին լսած է 6-7 Սեպտեմբերի պատահարները: «Թէ տարիքի բերմամբ

եւ թէ պոլսեցի չըլլալու հետեւանքով նախապէս պատկերացում մը չունէի այս դէպքերու մասին: Զարհուրելով լսեցի Կարպիս Զաքարեանի եւ իր բարեկամներուն այդ դէպքերու մասին վկայութիւնները: Այդ օր Զաքարեան պատահմամբ կը հանդիպի ոստիկանի մը գոր ինք ճանչնալով կը զգուշացնէ ժամ առաջ տուն երթալու մասին: «Շուտով տուն գնայ- կը զգուշացնէ ոստիկանը: Ապա լուռ կը մնայ: Ոչ մէկ բացատրութիւն թէ ինչո՞ւ պէտք է շուտ տուն վերադառնայ: Այդ հարցումին պատասխանը Զաքարեան կը տեսնէ իր տան փողոցին անկիւնը հասնելով: Կը տեսնէ խորտակուած խանութները, տուները, բայց կը դժուարանայ այդ տեսածներուն իմաստ վերագրելու մէջ: Ի՞նչ էր պատահածը, ի՞նչ եղած էր, որ մարդիկ այսպէս վայրագօրէն կը յարձակէին քրիստոնեաներուն սրբավայրերուն, տուններուն կամ խանութներուն վրայ: Կը թալանէին ամէն ինչ, կը սրբապղծէին բոլոր սրբութիւնները»:

«ԱԿՕՍ»

### ԱՆՃԵՐՈՒ ՓՈՒՓՈՒՄԻՆԸ ԲԱՆԱՐԱՐ ՉԷ

**Շարունակուած էջ 1-էն**

Լորաբար ապաւինելով միջազգային վարկերու վրայ: Ինչ կը վերաբերի 2018-էն ետք վարչապետ մնալու մասին իրեն տրուած խոստումին, այդ եւս մեծ հարցականի տակ է: Օրըստօր կ'ամրապնդուի այն կարծիքը, որ Սերժ Սարգսեան պատրաստ չէ իշխանութիւնը յանձնելու մէկ ուրիշին:

Այսպիսով, Կարէն Կարապետեանի օրինակը անգամ մը եւս կու գայ փաստելու, որ Հայաստանի դիմագրաւած հարցերու լուծումը կապուած չէ անձերու փոփոխութեամբ: Արմատները շատ աւելի խորքային են ու պայմանաւորուած համակարգային փոփոխութեամբ, որու հետեւ կարը չտեսնուիր առայժմ:

«ՄԱՍԻՍ»

### Նոր Բացայայտում

**Շարունակուած էջ 1-էն**

վարչապետի փոխանորդին միջեւ սերտ կապերու մասին կը վկայէ նաեւ այն հանգամանքը, որ Սաֆա-

րովի արտայանձնումէն շատ չանցած 2012 թուականի Յունիսին Պաքու կատարած այցի ընթացքին Օրպանը դիմաւորած է ինք՝ Եաբուկ էյուպով:

**GARNI**

**Nourish your hair with natural products**

www.GarniUSA.com  
Pasadena, CA 91102, USA

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՇՄԱՆՂԱՍ ԵՒ ԿԱՐԻՔԱԻՈՐ ԵՐԵՒԱՆԵՐՈՒՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐԵԿԱՆ 18-ՐԴ ԹԵԼԵԹՈՆԸ

ԽԱԶԻԿ ԾԱՆՈՅԵԱՆ

«Տեր Աստուած փառքը քեզ, Օգնիր որ զօրանանք, Հօգը Հայաստան դառնանք»

Նիւ Եորքում ապրող նկարիչը շարունակ իրեն կապուած էր զգում ազգային գեղագիտական, բարոյական արժէքների, մանկութեան յիշատակների, հարազատների, յատկապէս յանուն երեխաների սովամահ եղած մօր հանդէպ երախտագիտութեան զգացումների հետ: Եւ հոգու տուճալանքներից ազատուելու ելքն ի վերջոյ գտնուում է: Հեղինակը տպաւորիչ իրավիճակում է ներկայացնում «Նկարիչն ու իր մայրը» հանրայնապետ նկարի եւ Ա. Գորկու գլուխադրած յոգններից մէկի ստեղծման ընթացքի ողջ բարդութիւնն ու դրամատիզմը: «Մտալկուծէն ձերբազատուելու միակ ելքը մայրը վերակենդանացնելն էր, այսինքն անմահացնել պատառին վրայ եւ արուեստի հրաշքով, այն տրամաբանութեամբ, որ ապրող, կենդանի էակին, ալ ի՞նչ գերեզման: Որոշելը հեշտ եղաւ, բայց գործադրելը, իրականացնելը եւ գրեթէ անկարելի: Հարցը ֆիզիքական նմանութիւնը չէր» (2): Նա դիմանկարներ գծանկարելու մէջ վարժուել էր, նոյնիսկ Պոսթոնի կինոդասիստներից մեկուս, հինգ վաշտակներում ԱՄՆ-ի հինգ նախագահների նկարները գծանկարելով, հինգական տղար էր վաստակել: Իսկ ահա մօր դիմանկարը ստեղծելը հոգեբանական ու ստեղծագործական շատ աւելի բարդ խնդիր լուծելու առաջ էր կանգնեցրել նրան: «Ինք կ'ուզէր, որ մօրը նկարը խորք ու ձեւի միա-

ձույլ ամբողջութիւն մը ըլլար, ուր համադրուէին գոյն, գիծ, կառուց, կշռոյթ, ծաւալ ու սլացք: Եւ այս բոլորը պարզ ու մատչելի բոլորին: Եւ որ սակայն անոնք չգողրէին խոր արտայայտչականութեամբ խորհրդանշել մօրը հուշիւնը, անոր հոգեկան հորիզոնը, կեանքը, գրկանքներն ու տառապանքը, յոյսերն ու երազները, լացն ու ժպիտը, հայութիւնն ու մարդկայնութիւնը: Մէկ նկարի մէջ այդպիսի բարդ տիեզերք խտացնել, չաւանդութիւն մըն էր, որուն մատչելի կ'ուզէր անպայման, որովհետեւ համոզուած էր, թէ կատարելութեամբ միայն արժանաւորապէս պիտի կարողանար վերակենդանացնել մայրը: Ինչ փոյթ թէ դժուարին ուղի էր ընտրածը» (3): Մանկութեան շրջանում, վանում, մօր հետ լուսանկարն է գտնուում: Դրա հիման վրայ տարբեր գեղանկարչական ուղղութիւններին բնորոշ ոճերով (ուսուրիական, իմպրեսիոնիստական, կուբիստական, էքսպրեսիոնիստական, աբստրակցիոնիստական) նկարելով տարբերակներ ստեղծելու իրողութիւնը վկայում է Ա. Գորկու համար դրանց ե՛լ մատչելիութեան, ե՛լ այդքանով չբաւարարուելու, ուրոյն, ինքնատիպ մօտեցում հանդէս բերելու նրա ձգտումների մասին:

Հեղինակն իսկապէս ուսուցանական պատկերմամբ է ներկայացնում ԱՄՆ-ում Արշիլ Գորկու դէմ ծառայած իրական դժուարութիւնների յաղթահարում, նիւ ետրքեան բոհեմում ապրելու եւ ստեղծագործելու, ազգային, եւրոպական դասական եւ արդի նկարչներից ուսումնառութեան բարդ ճանապարհը:

Այդ ամենի միջով անցնելու համար անշուշտ անհրաժեշտ էր օժտուած լինել ուժեղ կամքով, նպատակին հասնելու անսպառեռանդով, գեղանկարչութեան մէջ նոր գեղարուեստական պատկերաւորման միջոցների կիրառմամբ հանդէս գալու հետեւողականութեամբ: Այդ ամենով հանդերձ եւ իր կայուն մտասեւեռումը հայրենիքի եւ Վանի, ծննդավայր խորագոմ գիւղի, բնաշխարհի գոյների ու ձեւերի, իր ընտանեկան ու անհատական դառը ճակատագրի տպաւորութիւններն են: Բայց եւ այնպէս նկարիչը կենսասէր է, հայ բանաստեղծների (Թումանեան, Իսահակեան, Տէրեան) ստեղծագործութիւնների ու ժողովրդական երգերի կատարումներով է ուղեկցում հերթական նկարի արարումը: Սակայն, ազգայինի մասին

ամերիկյան արուեստասէրներին ներկայացնելը եւս փորձութեան է ենթարկում նրան: Իր նկարներով ցուցահանդէսին մասնակցելու համար հարկադրուած է լինում համաձայնուել, որ «Պարտէզ խորգոմում» նկարը անուանուի «Պարտէզ Սոչիում», քանի որ Սոչին աւելի յայտնի տեղանուն էր:

Հեղինակը հաճոյքով է կարեւորել 1940-ական թուականներին Ֆրանսայում ֆաշիստներից խոյս տուած եւ Նիւ Եորքում հանգրուանած Ֆրանսացի նշանաւոր մոդեռնիստ նկարիչների, Եւրոպայում սիւրբեալիզմի գրականութեան նշանաւոր հիմնադիր Անդրէ Բրետոնի (1896-1966) հետ հանդիպումները: Վերջինիս հետ մտերմութիւնը պայմանաւորուած էր Ա. Գորկու նկարներին տուած բարձր գնահատանքով, դրանց խորհրդանշական, անսովոր, զարմանալի բնոյթով, կյանքի, ազատութեան խորքային զգացումների գունազօյն, ընդհանրապէս ինքնատիպ մտածողութեան, պատկերային արտասովոր արտայայտութիւններով: Ա. Բրետոնը նոյնիսկ նկարչի համաձայնութեամբ ինքն է վերնագրում մի շարք նկարներ, գրում է անհատական ցուցահանդէսի բրոշիւրի ներածական խօսքը:

Այս կենսագրական վէպի գրաւէութեան նախապայմաններից են նաեւ հեղինակի յատկատեսութեան դրսեւորումները ամերիկեան բարքերը, արուեստի հետ տարբեր առնչութիւններով ու տիպական գծերով պատկերուած մարդկանց գլխավոր կերպարի եւ նրա կնոջ եւ Ագնեսի կեանքում իրենց կայրողիկ, սակայն, կարեւոր դերակատարմամբ ներկայացնելիս: Ա. Գորկու գեղանկարչական գործերը մեկնաբանելու հեղինակի խորաթափանցութիւնը նախ եւ առաջ նպաստում է, որ աբստրակցիոնիստ նկարչի ստեղծագործութիւնների բովանդակութիւնն ընթերցողի ու մեկնաբանուի նկարչի հոգուն ու ճակատագրին համահունչ բովանդակութեամբ: Զէ՞ որ վերացապաշտ նկարիչների աբստրակտ նկարները ենթարկուած են բաւականին բազմազան տարբերութեանների: Ս. Վահագնը Ա. Գորկու նկարներում տեսնում է ե՛լ համամարդկային, ե՛լ ազգայինի անձնական-անհատականի համադրումներ: Նման մօտեցումները կարող են նպաստել ընթերցողին ճիշտ հասկանալու հայ վերացապաշտ նկարչի ստեղծագործութիւնների բովանդակութիւնը, դրանց պատճառահետեւանքային առնչութիւնները գրողի հետաքրքրութիւնների ոլորտի հետ: Նման գրողական մոտեցումն աւելի տեսանելի է դարձնում նկարչի խորհրդանշական գունաձեւային պատկերների

իրական, կեանքային հիմքերը: Ս. Վահագնի կողմից Ա. Գորկու նկարների ներհուն մեկնաբանութիւնները կարծում ենք մեծացնում են այս կենսագրական վէպի ճանաչողական նշանակութիւնը: Դրան նպաստում է նաեւ Գորկու ազգային նկարագրի, հայկականութեան ու ամերիկեան միջավայրի բարքերի որոշակի հակադրութեան ու այդ միջավայրում ինքնահաստատման բարդութիւններին դիմակայելու բացայայտումները: Կանանց հանդէպ սիրոյ եւ շարաբերութիւնների պատկերմամբ աւելի է կոնկրետանում նկարչի բարոյահոգեբանական նկարագիրը: Յատկապէս համոզիչ եւ դրամատիզմով հարուստ նրբերանգներով են արտայայտուած նրա սէրն ու նուիրուածութիւնը Ագնեսի հանդէպ:

Կենսագրական վէպում դիպաշարը բնականաբար համընկնում է ֆաբուլայի հետ: Ըստ այդմ նկարչի կեանքի դրամատիկ ու ողբերգական աւարտը դառնում է վէպի վերջին դրուագ: Այն, ըստ էութեան, բերում է հետեւեալ եզրակացութեան. Ա. Գորկու-Ոստանիկ Ադոյեանի, արդեն ճանաչման արժանացած նկարչի դժբախտութիւնը ոչ թէ տարագիր հայի ճակատագիրն էր, այլ քաղցկեղի պատճառով կատարուած ծանր վիրահատութիւնը, աւտովթարը, որը զրկեց նրան նկարելու հնարաւորութիւնից, կնոջ անհաւատարմութիւնը, երբ նա ի վերջոյ նրան լքեց եւ այդ վիճակում թողնելով միայնակ: Նկարիչը տարագրութեան մէջ միշտ յուսել կապել էր իր առողջութեան ու ֆիզիքական հնարաւորութիւնների հետ: Դրանք կորցնելու հետեւանքով նա գրկուել էր նաեւ իր կեանքի իմաստն հանդիսացող նկարելու հնարաւորութիւնից, իսկ ուրիշ կերպ նա չէր կարող ապրել: Ուստի ինքնասպանութիւն գործելով եւ նա վերջ է տալիս իր կեանքին:

Վէպի բովանդակութիւնն, անշուշտ, աւելի հարուստ է, այն հեղինակային պատկերաւոր խօսքով, բառերով գեղանկարելու ունակ լեզուով գրուած լինելու շնորհիւ ընթերցման հաճոյք կարող է պարգեւել ընթերցողին: Վէպում ստեղծուել է ազգային արժէքներով հպարտ, առօրեայ կենցաղի եւ գեղեցիկի ինքնատիպ դրսեւորումներով ոգեւորուող անուանի ամերիկահայ նկարչի տեսանելի կերպարը, որի նկարներից առաւել նշանակալիները ցուցադրուած են ԱՄՆ-ի ու եւրոպական յայտնի թանգարաններում, ամենահեղինակաւոր արուեստաբաններ են նրա մասին յօդուածներ ու մենագրութիւններ հրատարակում:

- \*\*\*\*\*
- 1. Սարգիս Վահագն, Արշիլ Կորքի, Վեպ, Լոս Անճելես, 2004, էջ 7:
- 2. Նոյն տեղում, էջ 11:
- 3. Նոյն տեղում, էջ 12:

Save the Date  
Event: AACCCWD 2017 Convention & Assembly  
Guest Lecturers: Very Rev. Fr. Daniel Findikyan,  
Dr. Kimberly James, Mr. Sevag Derderian

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
SERVING BATON ROUGE SINCE 1979

  
MEMBER  
**NATIONAL NOTARY ASSOCIATION**  
NOTARY PUBLIC  
**Garine Depoyan**  
626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepoyan@gmail.com

### ԷԴԻԿ ՄԵՐՈՒԲԵԱՆԸ ԲԱՌԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ



#### Ռ. ԿՈՐԻԻՆ

Արդարև բառերն իրենց աշխարհն ունեն, ժամանակի պահանջներին եւ պայմաններին համապատասխան կեանքի են կոչուել կեանքն ու շարաբերութիւնները ըմբռնելի դարձնելու, մարդու մտքին եւ հոգուն թռիչքներ տալու, մտածումների եւ զգացումների արտաբերման արտայայտիչը լինելու համար: Այո՛, բառը կեանք է, ուժ է զօրութիւն, արուեստ եւ գիտութիւն, մարդուն թեւեր է տալիս, գագաթ է բարձրացնում եւ նաեւ խորխորատ իջեցնում, զգուշ պիտի լինել գործածելիս:

Բառերի ստուգաբանման սիրահար էդիկ Մեհրաբեանը երկար տարիներ յամառ աշխատանքի արդիւնքում հայ-իրանական եւ միւս հարեւան ժողովուրդների լեզուական առնչութիւններին վերաբերող մեծածախ բառերի ստուգաբանութեամբ կատարել է բացառապատմանը, որոնց մասին հրապարակումներով է ներկայացել՝ հանդիպումների, մամուլի եւ եթերի միջոցներով, ահա այսպիսով նա իր գնահատելի ծառայութիւնն է բերում արմատագիտութեան բնագավառում:

Է. Մեհրաբեանի համար հայերէն բառերի ստուգաբանական աղբիւր է ծառայել պարսկերէն լեզուով հրատարակուած՝ «Իրանահայերը» գիրքը, որը կարդալուց յետոյ նրա մէջ սէր է առաջացել ստուգաբանել հայերէնում եւ պարսկերէնում առկայ նոյնիմաստ, նոյնահունչ եւ այլ բառերը: Նա ինքնաշխատութեամբ առանց օգնութեան տարիներ աշխատում է այս բնագավառում:

Նա ազգային պատուազգացողութիւնից մղուելով փաստերի հիման վրայ համոզուած է, որ հայոց լեզուի արմատական բառապաշարը օտար ազդեցութեանց արդիւնք է: Այս տեսակէտով մէջ բերենք իր խօսքը՝ «Չմեղանչենք՝ հայոց լեզ-

ուի արմատական բառապաշարը օտար ազդեցութիւնների արգասիք դիտելով: Ցեղակից լեզուներում նոյնարմատ բառերի գոյութիւնը բնական երեւոյթ է, ուստի չշարունակենք նախորդների պէս հայերէնում լայն տարածում գտած բառերը փոխառելու համարել, մանաւանդ որ ենթադրեալ փոխատու գրական լեզուում չկան»:

Անդրադառնալով իր յօդուածին որոշ փոփոխութիւններով մէջ բերում ենք կատարում իր աշխատանքի էութիւնը պարզելու համար՝

Իր դիտարկումների շնորհիւ իրանի տարբեր բարբառներում նա յայտնաբերել է բազմաթիւ բառեր ու արմատներ, որոնք գրեթէ նոյն իմաստն ունեն նաեւ հայերէնում: Մեծ թւով այդպիսի բառեր նա գտել է նաեւ տեղական երգարաններում ու բառարաններում: Այդ բառականին մեծ թիւ կազմող նորայայտ բառերը ցրուած են պարսկերէնի տարբեր բարբառներում եւ արդի գրական պարսկերէնին չեն անցել, իսկ հայոց լեզուում գործածական են, ուստի մտորել են տալիս նոր հայեացքով նայել հայ-պարսկական լեզուական առնչութիւններին: Ներկայացում է ներքոյ յիշեալ բառերը, որոնք առկայ են պարսկերէնում, հին հայերէնում եղել են եւ գործածական են նաեւ այսօր, դրանցից են՝ խոռ (փոս), խորթ, հող, որդի, որթ, ոստ (շիվ), կրակ, երէկ, բուրդ, մարել, պատառ, պատ, որ (ստորադասական շաղկապ), լեփ ու լեցուն, բորբոք, կտուր, թորել, քորել ու քերել, բողբոջ, քար եւ բազում այլ բառեր, այս քսանական համընթաց բառերը որպէս նմուշ սրանց եւ այլ բազում բառերի ծագումնաբանութիւնը ճշտուած եւ մամուլով հրատարակուած են՝ («Ազգ» յուլիսի 19, 2012 թ., «Եթեր» յուլիսի 18, 2013 թ. թիւ 29, «Եթեր» օգոստոսի 27, 2015 թ.

թիւ 35, «Եթեր» թիւ 36 (1159) 01, 09, 2016 թ.: «Ալիք»-ում թղթակցութիւն ՀԳ.ի հանդիպումից, թիւ 204 (22580) սեպտեմբերի 29, 2016 թ.: է. Մեհրաբեանի յօդուածները «Ֆարհանգեսթանի» (Իրանի լեզուի ու գրականութեան բաժնագոյն կենտրոնի օրգան) թերթում պարսկերէն լեզուով:

Առ ի տեղեկութիւն եւ համոզում ներկայացնում ենք մէկ օրինակը նրա ստուգաբանութիւններից «ԿՈԹ» բառը՝ հրատարակուած՝ «Եթեր» թերթում յուլիսի 18, 2013 թ. 29 թիւով՝

«ԿՈԹ»-ը, ըստ Հրաչեա Աճառեանի «Արմատական բառարան»-ի (հատոր 2, էջ 614) աւելի քան 800 տարուայ վաղեմիութիւն ունի, թէպէտ լինելով խիստ կենցաղային եւ նախնական բառ, պիտի կարծել, որ վաղեմիութեան եզրերը հասնում են պատմութեան ամենախորքերը: Աճառեանի մօտ, սակայն, «ԿՈԹ»-ը առանց որեւէ պայմանական նախանշանի է բերուած, ինչը վկայում է, որ մեծ լեզուաբանի կարծիքով, այն դասուել է անստոյգ եւ անցեղակից, սահմանափակ տարածում գտած բառերի շարքը: Պրոֆ. Գ. Զահուկեանն էլ իր՝ «Զրոյցներ հայոց լեզուի մասին» գրքում (էջ 65), «ԿՈԹ» բառը շատ բառերի հետ անյայտ ծագման՝ չստուգաբանուած բառերի շարքն է դասուում: Հեղինակի կարծիքով՝ գործ ունենք տարածում գտած բառի հետ, որ պահպանելով նախնական իմաստը, ինչպէս նաեւ հետզհետէ առաջացած տասնեակ փոխաբերական իմաստներ, գործածութիւն ունի պարսիկ լեզուախմբում: Ստորեւ ներկայացնող փաստարկների հիման վրայ հաւատալի ենք ուզում դարձնել, որ գտել ենք նոյնարմատով բառ ու բարդութիւններ, որոնք առկայ են հարեւան ժողովուրդների լեզուում եւ բար-

բառներում: Հարկ է նշել, որ «ԿՈԹ» արմատի առկայութիւնը այս յօդուածում կը շեշտաւորուի: (Նկատելով «ԿՈԹ»-ի մասին երկար մեկնաբանութիւններ է արուած, բաւականանք այսքանով, միայն մի պատկեր հեղինակի աշխատանքից, հետաքրքրողները թող դիմեն թերթին ամբողջութեամբ կարդալու համար):

Նրա պրպտումների եւ ստուգաբանութեանց ոլորտը արդիւնաւէտ դեռ տքնաշան շարունակուած է՝ մտքով ու հոգով կառչած մնալով աշխատանքին, դրանովհանդերձ որ ծանրաբեռնուած է միութեանական պարտականութիւններով, ուսուցչական դասաւանդութեամբ, համալսարանի դասերով եւ տան հոգսերով, պատահում է, որ խորանալով բառերի էութեան մէջ գիշերներ է լուսացնում:

Նուաստ տեղեկ լինելով է. Մեհրաբեանի ուսման մակարդակի, նրա պրպտումների եւ հայրենասիրութեան մասին իրեն քաջալերեցի գայ «Անստիտուտ Մարիամ» դպրոցում դասաւանդի, ուր եւ դասաւանդում էի: Նա խստապահանջ, բծախնդիր եւ սրտցաւ ուսուցիչ-վերակացու էր, յետագային պետական պաշտօնական ուսուցիչ դարձաւ, պարսկագիտութեան շնորհիւ նրան հայկական դպրոցից տեղափոխեցին պարսկական դպրոց պարսկերէն դասաւանդելու բարձր դասարանցիներին, դեռ շարունակում է իր պաշտօնավարումը որպէս յաջող եւ սիրուած ուսուցիչ:

Է. Մեհրաբեանը իր հայեացքին առջեւ ունենալով բառերի աշխարհը առանց վհատելու աշխատանքի բարդութիւնից առաջ է գնում իր նպատակների եւ երազանքների իրականացում, մաղթում ենք քաջառողջութիւն եւ յաջողութիւն յոյս ունենալով տեսնելու հրատարակուած գիրք:

### Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ ՎԱՀԷ ԱՉԱԳԱՀԵԱՆԻՆ:

**Vahe Atchabahian**

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104

**Tel: 626-354-5924**

vamedia@yahoo.com



### ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ԸՆՈԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

### Կիեւի Ազգային Պատկերասրահում Բացուել է Յովհաննէս Այվազովսկու 200-Ամեակին Նուիրուած Ցուցահանդէս



Ուկրաինայի մայրաքաղաք Կիեւի ազգային պատկերասրահում Սեպտեմբերի 12-ին բացուեց «Հանճարը եւ ծովը. աւանդոյթները, որոնումները, յայտնագործութիւնները» խորագիրը կրող ցուցահանդէս՝ նուիրուած Յովհաննէս Այվազովսկու 200-ամեակին եւ պատկերասրահի 95-ամեակին: Ինչպէս հաղորդում է «Արմենպրես»-ը՝ վկայակոչելով Analitikaua.net-ը, կազմակերպիչները, նկարագրելով հայ նկարչի ստեղծագործական ուղին, նշել են, որ Այվազովսկին եղել է ախալաբու բնակարիչ, մարինիզմի հիմնադիր, ում աշխատանքները մեծ ազդեցութիւն են թողել հայկական, ուկրաինական ու ռուսական մշակույթների վրայ:

«Նա գեղանկարչութեան պատմութեան մէջ յայտնի է որպէս ծովի անգերագանցելի երգիչ: Նրա ժամանակակիցներից ոչ ոք չէր կարող նման ուժով եւ ոգեշնչմամբ ցոյց տալ ծովի տարրերի մեծութիւնն ու գեղեցկութիւնը», - նշել են կազմակերպիչները: Յուցահանդէսում ներկայացուելու են XVIII-XX դարերի նկարչութեան եւ գրաֆիկայի աւելի քան 60 աշխատանքներ, որոնք վերաբերում են ծովային թեմային: Յուցադրուելու են նաեւ Այվազովսկու լուսանկարները, որոնք կորել էին Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, իսկ այնուհետեւ գտնուել, ինչպէս նաեւ Շերեմետեւի թանգարանի ցուցանմուշները՝ արխիւային նիւթերը, լուսանկարները, 19-րդ դարի մարտական նաւերի տարբեր իրերը եւ անձնակազմի ունեցուածքը: Յուցահանդէսը ներառում է նաեւ աւելի քան մէկ տասնեակ նկարներ եւ գրաֆիկական աշխատանքներ, որոնք ներկայացնում են նկարչի աշխատանքի տարբեր ժամանակաշրջանները: Յուցահանդէսը բաց կը լինի Սեպտեմբերի 12-ից մինչեւ Հոկտեմբերի 31-ը:

### «Վերջին Բնակիչը» Ֆիլմը Ցուցադրուած է Վենետիկի Շարժանկարի Փառատօնին



Վենետիկի շարժանկարի փառատօնի Venice Production Bridge-ի մէջ ցուցադրուած է ձիւան Աւետիսեանի «Վերջին բնակիչը» ֆիլմը, որ կազմակերպուած էր Վենետիկի նահանգապետ Լուքա Զախայի բարձր հովանու ներքոյ՝ «Ֆիշ աչ Արթ» մշակութային հիմնադրամի իտալական գործընկեր Blue Knowledge Association- նախաձեռնութեամբ, յանձին միութեան տնօրէն Orietta Trevisanու Zampieri-ի: Այդ առիթով ֆիլմի ստեղծագործական կազմէն իտալիա ժամանած էին բեմադրիչ ձիւան Աւետիսեանը, լիթվիացի արտադրող

Քեստուտիս Տրազտաուսկասը, ամերիկեան խումբէն՝ գործադիր արտադրող Ատրինէ Միրզայեանը, իսկ դերասանական կազմէն՝ գլխավոր կերպար կերտած լիթվիացի դերասանուհի Սանտրա Տաուկալայթէ ֆեթրուլենէն: Յուցադրութեան ներկայ էին հասարակական, մշակութային գործիչներ, շարժանկարի ոլորտի ներկայացուցիչներ: Յուցադրութիւնը խոստովանալից էր, քանի որ հիմնական նպատակը իտալիոյ մէջ «Վերջին բնակիչը» ֆիլմի տարածումն էր, որ դրական արձագանգ ունեցած է: Յուցադրութեան յաջորդած է

### Արցախի Պեղավայրերում Յնագէտները Ինտարքիթի Բացայայտումներ Են Կատարել



Արցախի Տիգրանակերտում այս տարի 40 օր տեւած պեղումների արդիւնքում մի շարք ուշագրաւ գտածօներ են յայտնաբերուել: Այն ամրոցից, որը կառուցել է Տիգրանը, ոսկեայ գարդերի մասունքներ են յայտնաբերուել: Արցախի հնագիտական արշաւախմբի ղեկավար Համլետ Պետրոսեանն «Արմենպրես»-ի հետ զրոյցում ասաց, որ դեռեւս յայտնի չէ, թէ ինչ գարդի մասունքներ են, բայց դրանք շուտով կը հրապարակուեն: «Այս տարի բազմաթիւ երկաթէ իրեր ենք յայտնաբերել՝ դանակներ, տեգի ծայրեր, մկրատի մասեր, հարիւրների հասնող գունազարդ եւ ջնարակապատ խեցեղէն», - ասաց Պետրոսեանը, յաւելելով, որ Տիգրանակերտի նիւթը շատ հարուստ է՝ մայրաքաղաքային մակարդակի:

յայտնաբերուել: Արցախի իշխանութիւնները Տիգրանակերտը պեղելու համար հատկացրել են 17 միլիոն դրամ: Արցախի հնագիտական արշաւախումբը 2005թ. ճշգրտել է Արցախի Տիգրանակերտի կոնկրետ տեղադրութիւնը, իսկ 2006-2008թթ. պեղումներ է իրականացրել քաղաքի եւ նրա մերձակայքի տարբեր հատուածներում, որոնց հետեւանքով երեւան են հանուել Միջնաբերդի կառուցները, Ամրացուած թաղամասի պարիսպները, նոյն թաղամասի դարաւանդներից մէկի յենապատը, Կենտրոնական թաղամասի բազիլիկ եկեղեցին: Յետախուզական պեղումներ են կատարուել նաեւ Ամրացուած թաղամասի ու Կեդրոնական թաղամասի մի քանի հատուածներում, վաղբրիստոնէական դամբարանադաշտում: Հետազօտուել են նաեւ քաղաքի մերձակայքում գտնուող պաշտամունքային-քարայրային համալիրը, նրա ստորոտով անցնող ժայռափոր ջրանցքը, խաչնագետի ձախափին գտնուող վաղ միջնադարեան ամրոցը:

Արշաւախմբի ղեկավարը սակայն մտահոգութիւն ունի. Տիգրանակերտը նման մանր պեղումներով դժուար է ամբողջականացնել: «Հարիւրաւոր մեթրեր ձգուող պարսպապատից ամէն տարի 15 մեթր պեղելուց ինչպիսի ստանանք: Պեղումները սահմանափակ են, բայց ես շնորհակալ եմ Արցախի իշխանութեանը, որ այդքան աջակցում է մեզ: Եթէ մենք այդ յուշարձանը մէկ-երկու տարի չպեղենք, այն կը վերածուի հողակոյտերի: Մենք ամէն տարի պեղման աշխատանքներ սկսելուց առաջ 10 օր միայն մաքրման աշխատանքներ ենք տանում», - ասաց նա: Տիգրանակերտում պեղումներն այս տարի մեկնարկել են Յուլիսի 8-ին: Պեղման աշխատանքներ են իրականացուել ինչպէս ամրացուած թաղամասում, այնպէս էլ վաղբրիստոնէական հրապարակում, որտեղից բազմաթիւ ճարտարապետական հանգոյցներ, ուղիղ աշտարակ, վաղբրիստոնէական կոթողներ են

Պեղումների միջոցով գետնի տակից վեր հանած կառուցները եւ նիւթերը հաւաստում են, որ Տիգրանակերտը եղել է քաղաքաշինական առաջադէմ յատկագրմամբ եւ շինարարական տեխնիկայով ստեղծուած ընդարձակ մի բնակավայր, որը հիմնադրուելով մ.թ.ա. առաջին դարում յարատեւել է մինչեւ 14-րդ դարը: Այն ամբողջովին կառուցուել է տեղական սպիտակ կրքարից, փոուել է լեռան լանջն ի վեր (արհեստական դարաւանդների տեսքով) եւ ստորոտի հարթավայրում, ունեցել է հզօր պարիսպներ, ժայռափոր ջրանցքներ: Տիգրանակերտը եղել է այգիների մէջ թաղուած սպիտակ քաղաք:

քոթէյլի երեկոն, որու ընթացքին տեղի ունեցած է միտքերու փոխանակում: Ներկաները կիսուած են իրենց տպաւորութիւններով, հնչող կարծիքները շատ դրական եղած են: Ֆիլմի ստեղծագործական կազմը նոյնպէս կարեւորած է «Վերջին բնակիչը»՝ որպէս միջազգային արտադրութիւն: Ֆիլմի գործադիր արտադրող Ատրինէ Միրզայեան շեշտադրած է նաեւ Սփիւռքի դերը նման հայկական ֆիլմերու խրախուսման գործին մէջ: Կայացած է «Վերջին բնակիչը» ֆիլմի վերաբերեալ մամուլ

ասուլիս, որուն ներկայ եղած են ֆիլմի ստեղծագործական կազմը, իտալիոյ մէջ ՀՀ դեսպան Վիթթորիա Պաղտասարեանը, հայկական արմատներ ունեցող իտալացի յայտնի գրող Անթոնի Արսլանը: Դեսպանը, կրկին ներկայացնելով ատրպէյճանա-դարաբաղեան բախումը, խօսած է ֆիլմի կարեւորութեան մասին: Ան ընդգծած է, որ այսօր Արցախի մասին տեղեկատվութիւնը սահմանափակ է, իսկ նման ֆիլմերը կը նպաստեն անոր վերաբերեալ իրազեկուածութեան բարձրացման:

## Գիտակցուած Յարաբերութիւններու Հիմնական Առանձնայատկութիւնները

- Վստահութիւն: Վստահութիւնը յարաբերութիւններու հիմքերէն մէկն է: Տարբերութիւնը այն է, որ գիտակցուած յարաբերութիւններու մէջ վստահութիւնը ընտրութիւն է: Կայ վստահութեան երկու տարբերակ՝ կրաւորական եւ գործօն:

Կրաւորական վստահութիւնը այն է, երբ կը սպասէք մինչեւ շրջապատող աշխարհը վստահութեան արժանի ըլլայ: Կը սպասէք մինչեւ հանդիպիք արժանի մէկուն, որուն կարելի է վստահիլ:

Գործօն վստահութիւնը գիտակցուած որոշում է. ես կ'որոշեմ վստահիլ, քանի որ կը հաւատամ, որ այդպէս ընելով իմ կեանքս աւելի լաւ պիտի դառնայ: Ատիկա չի նշանակեր կոյր վստահութիւն: Եթէ մենք որոշած ենք վստահիլ, մենք կը սկսինք մեր կեանք հրաւիրել իսկապէս արժանի մարդիկ:

Գործօն վստահութիւնը լաւատեսական մօտեցում է յարաբերութիւններուն:

- Ներում: Երբ մեզ ցաւ կը պատճառեն, մեր բնազդային արձագանգն է պատասխան ցաւ պատճառելը: Բայց եթէ արձագանգը միշտ այդպիսին ըլլայ, յարաբե-

րութիւններ կառուցելը անհնար պիտի ըլլայ: Գիտակցուած այլընտրանքը ներելու մշտական փորձն է: Ատիկա ոչ միշտ բնական է եւ դիւրին, բայց միշտ ճիշդ է: Երբ նոյնիսկ մեզի ուժեղ ցաւ կը պատճառեն, հարկաւոր է քիչ մը հեռանալ, իսկ երբ ժամանակը գայ՝ ներել: Ներողամտութիւնը խնդրի մասնակիցներուն կ'օգնէ բուժուելու եւ անցնելու նաեւ այդ փորձութեան մէջէն:

- Պատասխանատուութիւն սեփական արարքներու համար: Հագրուադէպ կը պատահի, որ յարաբերութիւնները առանց ցաւի ըլլան: Յաճախ մարդիկ կը մեղադրեն իրար:

Բայց գիտակցուած են այն յարաբերութիւնները, երբ անոնք կը կառուցեն հասուն, անկախ եւ պատասխանատու անհատները: Ատիկա կը նշանակէ պատասխանատուութիւն ստանձնել սեփական երջանկութեան եւ բարեկեցութեան համար, այլ չսպասել, որ ձեր գուզընկերը ձեր կեանքը հրաշալի պիտի դարձնէ: Ատիկա կը ներառէ բաց շփում. ոչ թէ գիրար մեղադրելու, այլ զգացմունքները կիսելու համար:

## Հոգեպէս Զօրաւոր Կիներու Վեց Գաղտնիք

1) Քանի դեռ ողջ ենք, անհնար ոչինչ կայ: Կեանքը մեզի կու տայ լիարժէք ազատութիւն գործողութիւններու եւ հնարաւորութիւններու, գործ մենք պարտաւոր ենք օգտագործել՝ յաջողութեան հասնելու համար: Հնարաւորութիւնը չ'ըլլար միայն այն ժամանակ, երբ մենք չենք ըլլար:

2) Սորվինք տեսնել մեր քիթէն այն կողմ: Եթէ որեւէ բան առաջին անգամէն չ'ըլլար, ատիկա թեւաթափ ըլլալու առիթ է: Բաներ կան, որոնք կու գան ժամանակի հետ, կարգ մը բաներ փորձ կը պահանջեն, այդ պատճառով՝ որոշ բաներու հասնելու համար հարկաւոր է շատ աշխատիլ:

3) Ուժը իւրաքանչիւրի բնաւորութեան գիծն է: Իւրաքանչիւր մարդ իւրովի ուժեղ է: Ոմանց համար մէկ անյաջողութիւնն ալ բաւարար է իրենց թոյլ զգալու համար, իսկ ուրիշներու համար 1000 անյաջողութիւնն ալ խոչընդոտ չէ նպատակին հասնելու ճանապարհին: Եւ ան, ով շատ կ'ուզէ, կը հասնի ամէն ինչի:

4) Դուն քեզ ցոյց տալ կը

նշանակէ անհատականութիւն ըլլալ: Եթէ չէք ուզեր դուրս գալ տունէն, կը վախնաք հանդիպիլ մարդոց, կը թաքնուիք շրջապատէն, ատիկա տկարութիւն է, որ կը ցուցադրէ, թէ դուք կը յանձնուիք: Պէտք չէ նման բան ընել: Հակառակը, դուք պէտք է այս աշխարհի մէջ ունենալ մէկը ըլլաք, ձեր կարծիքն ու բնաւորութիւնը ունենաք, այս կամ այն բարձունքին հասնիք:

5) Այն ամէնը՝ ինչ կրցած է մէկը ընել, կրնաք նաեւ դուք:

Կարիք չկայ ըսելու, որ չէք կրնար ընել: Բոլորն ալ որեւէ բան առաջին անգամ ըլլալով կ'ընեն: Պէտք չէ յանձնուիլ առաջին իսկ անյաջողութեան պարագային, փորձեցէք մէկ անգամ եւս, եւ ամէն ինչ նոյնիսկ ձեր նախորդներէն աւելի լաւ պիտի ընէք:

6) Երազելը վնասակար չէ, վնասակար է չերազելը: Միշտ, ամբողջ կեանքի ընթացքին երազանք ունեցէք: Թէկուզ վստահ էք, որ անիկա երբեք պիտի չիրականանայ, խնդրի չէ, անպայման երազեցէք: Ատիկա իմաստ կու տայ կեանքին:

## Տան Ամենաերջանիկ Խորհրդանիշերը

- Կաւէ սպասք: Կաւը շատ ուժեղ բնական նիւթ է, ապա հովուածութեան խորհրդանիշ: Եթէ կանոնաւորապէս կաւէ կուժ, գաւաթ կամ պնակ օգտագործէք, անոնք պիտի օգնեն պահպանելու ձեռք բերածը եւ պաշտպանելու չար աչքէն:

- Դրամի նկար: Ուժի դաշտը կ'ուղղուի հարկ եղած ալիքի վրայ, երբ տան մէջ դրամի պատկերով նկարներ կան: Անոնք հարստութիւն կը խորհրդանշեն: Սակայն հարկաւոր է չիշել, որ դրամն ու արժէքաւոր իրերը, ինչպէս նաեւ անոնց պատկերը, կարելի չէ պահել ննջարանին մէջ, քանի որ երկու տարբեր ուժերու միաւորումը կրնայ բացասաբար ազդել ձեր ինքնազգա-

ցողութեան վրայ:

- Զուրով լեցուն շիշեր: Զուկի փոքրիկ աւազան, իբրեւ զարդ դրուած ջրվէժ, ջրային ժամացոյց, ասոնք շատ հօր մազնիս են դրամի համար: Նիւթական ուժը շատ նման է ջուրի ուժին: Տան մէջ ջուրի աղբիւր դնելու պարագային հարկաւոր է աշխուժացնել դրամական հոսքը՝ անոր կողքին կամ անոր մէջ քանի մը մետաղադրամ դնելով:

- Յորենի հասկեր: Յորենը հին ժամանակներէն կը համարուի ապահովութեան խորհրդանիշ, քանի որ մեր նախնիներու կեանքն ու կեանքի որակը ուղղակիօրէն կախուած էին բերքէն:

Այսօր ցորենը կուշտ կեանքի հետ ուղղակի կապ չունի, բայց

## Դժուար Սիրոյ Պարզ Կանոններ

\* Կոպիտ մի՛ ըլլաք- Այստեղ ամէն ինչ շատ պարզ է՝ չվիճիլ անհնար է: Ընտանեկան կեանքը յիշե՛ք « է գորգին թափուած գուլպաներով, ակուայի մածուկի չփակուած տուփերով, ամէն չիմարութեան վրայ ծախսուած դրամներով, առաւօտեան ժամը 4-ին անսպասելի հեռաձայններով: Եւ տարօրինակ պիտի ըլլար այդ ամէնը ձայնի բարձր հնչերանգով չքննարկելը: Սակայն, սահման գոյութիւն ունի խնդիրները քննարկելու անհրաժեշտութեան, զայրոյթը հանդարտեցնելու եւ սատիստական թունակորման միջոցով:

\* Նոյնիսկ եթէ ճիշդ ես, նահանջէ՛- Նոյնիսկ եթէ դուն մշտապէս ճիշդ ես: Նոյնիսկ եթէ արդէն հազար անգամ ըսած ես, որ ամէն ինչ այդպէս ալ պիտի աւարտի: Նոյնն է՝ նահանջէ՛, ժպտա եւ ներողութիւն խնդրէ, որովհետեւ եւս 3 բառ եւ այլեւս անհնար պիտի ըլլայ իրավիճակը ուղղել: Ի վերջոյ, մէկը պէտք է աւելի խելացի ըլլայ: Ձեր վէճին պատճառը սկզբունքային չէ. չէ՞ որ զխաւորը, ըստ էութեան, միայն սէրն է եւ միասին ապրելու ցանկութիւնը:

\* Երբեք մի՛ ըսեր՝ «բայց ես կ'ըսէի»- Դուն կատարեալ եմ, բայց եթէ հաշուարկենք այն չիմարութիւնները, զորս ըրած ես հաշուետու ժամանակաշրջանին, ուրեմն պիտի

պարզուի, որ անոք, յամենայնդէպս, աւելի քիչ չեն քան գուզընկերոջը ըրածները, որովհետեւ մենք բոլորս ալ կատարեալ չենք:

\* Մի՛ վիրաւորեր անոր ընկերները- Զուգընկերդ մինչեւ քեզի հանդիպիլը ընկերներ ունեցած է: Եւ եթէ դուն նոյն ոգիով շարունակես, յետոյ ալ պիտի ունենայ: Ահա՛, այդ տխմարները: Կամ՝ ահա՛, այդ հոգիի նրբութիւն չունեցողները, զգուցի սովորութիւններով բամբասողները, որ աղջիկներէն վատն են: Ձեռ գիտեր ինչու, քու կէսը անոնց ընտրած է եւ կը կարծէ, որ անոք բոլորն ալ կ'աջակցին իրեն: Յիշէ՛ նաեւ, որ քեզի ալ ինքը ընտրած է:

\* Անտարբեր մի՛ ըլլար- Ոչ մէկը մշտական ինքնագոհաբերում կը պահանջէ, սակայն ակնկալիքներու, սկզբունքներու եւ գուզընկերոջ կարիքներուն վրայ կեդրոնանալը այնքան ալ դժուար չէ եւ զրեթէ միշտ օգտակար է: Իսկ եթէ ժամանակ առ ժամանակ այդ ակնկալիքները, սկզբունքները եւ կարիքները քեզմէ քիչ մը բարձր դասես, անդնահատելի պիտի ըլլաս:

\* Խօսի՛ր- Պարզապէս անհրաժեշտ է որքան հնարաւոր է շատ խօսիլ. աշխատանքի, գամի եւ փայտիկի գոյնի, ծրագիրները եւ չիշողութիւններու, սիրոյ եւ սուրճի տարբեր տեսակներու մասին:

## Վեց Բան, Զոր Միշտ Պետք է Յիշել

1) 80/20-ի կանոն (Պարէտոյի օրէնքը): Պարէտոյի կամ 80/20-ի օրէնքը կը նշանակէ 20% ջանք եւ 80% արդիւնք, իսկ ուժեղութեան մնացած 80%-ը կու տան 20%-ի արդիւնք: Օրինակ՝ պարտագիրը չէ մնաւոր կամ նկուղը ամէն օր մաքրել, քանի որ անոնք այնքան ալ յաճախ չեն օգտագործուիր, իսկ խոհանոցը կամ բաղնիքը ունին ամէնօրեայ մաքրութեան կարիք: Այսպիսով, ձեր տան մէջ սենեակներու 20%-ը կը պահանջեն ձեր ուշադրութեան եւ ջանքերուն 80%-ը: Այս պարագային տունը մաքրելու խնդիրը աւելի արդիւնաւէտ կը լուծուի: Կեդրոնացիր եւ ժամանակը ծախսէ արդիւնաւէտ գործերու վրայ:

2) Փարքիւնը օրէնքը: Փարքիւնը օրէնքին համաձայն՝ աշխատանքը կը սպառէ անոր կատարման յատկացուած ամբողջ ժամանակը: Այսինքն՝ եթէ գործատուն կը յանձնարարէ մէկ ամսուան մէջ կատարել աշխատանք մը, գորկարելի է աւարտին հասցնել մէկ շաբաթէն, ուրեմն աշխատողը անպայման գայն պիտի ընէ մէկ ամսուան ընթացքին՝ դժուարացնելով եւ երկարացնելով աշխատանքը կատարելու գործընթացը: Իսկ եթէ սահմանուած ժամկէտը ըլլայ մէկ շաբաթ, ան պիտի կեդրոնանայ իր գործին վրայ եւ արդիւնաւէտ կերպով կատարէ գայն: Այսինքն՝ պէտք է աւելի արագ գործել:

3) Նախ՝ տալ, յետոյ՝ ակնկալել: Այս է ճիշդ հերթականութիւնը:

Սկիզբը պէտք է տալ, իսկ

յետոյ՝ ակնկալել, քանի որ միայն այսպէս դուն պիտի ստանաս այն՝ ինչ կ'ուզէիր եւ ինչի մասին կ'երագէիր: Յիշէ՛, աշխարհի վրայ ամէն վայրկեան կ'իրականանայ ունենալ մէկուն երազանքը: Վաղը հաւանաբար քու երազանքը կատարուի: Ունէ՛ մէկը իր տուածէն աւելին չէ ստացած:

4) Միայնքերն ու անյաջողութիւնները բնական են: Անոնք անդնահատելի փորձ կրնան ըլլալ քեզի համար: Անյաջողութիւնները կրնան խթան դառնալ յաջողութեան ճանապարհին:

Միայնքերն պէտք չէ հիասթափուիլ, անոնք երբեմն կրնան դրական ազդեցութիւն ունենալ կեանքիդ վրայ:

5) Դիւրութեամբ ծանօթացէք եւ շփուեցէք: Իւրաքանչիւր հանդիպում պատմութիւն մըն է եւ անոր պէտք է լուրջ վերաբերիլ: Եթէ անծանօթ մարդոց հետ կը շփուիս այնպէս՝ ինչպէս մտերիմներուդ հետ, ուրեմն աւելի ինքնավստահ, աւելի անկեղծ մարդու տպաւորութիւն կը ձգես եւ դրականօրէն կ'ազդես դիմացինիդ վրայ:

6) Ձեր վերաբերմունքը կը փոխէ իրականութիւնը: Յոռետեսութիւնը կրնայ քոյրակուրի իրատեսութեան դիմակի տակ:

Այդ պատճառով ամէն անգամ դուք «ճիշդ» էք: Միւս կողմէն՝ աւելի լաւ է ո'չ միշտ այդպէս ըլլալ, քանի որ ժամանակի ընթացքին մենք կը սորվինք գտնել միայն այն՝ ինչ կը փնտռենք...

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

դարձած է ապահովութեան խորհրդանիշ: Որպէսզի տան մէջ միշտ գտնար եւ յաջողութիւն ըլլայ, խոհանոցը ցորենի հասկով փունջ ըղէք:

- Ոսկի գարդեր: Ոսկին շքեղութեան եւ հարստութեան արտացոլում է: Այս մետաղին ուժը ոչ

միայն կրնայ վերականգնել նիւթական հոսքերը, այլեւ զգալիօրէն աւելցնել գանոնք: Հարստութիւնը գրաւելու համար՝ ընտանեկան խնայողութիւններուն հետ ոսկի գարդ դրէք, իսկ գայն կրեցէք, երբ խոշոր գումարի անհրաժեշտութիւն յառաջանայ:

### Ժող է Մոուրիցիո. Դժգոհ էմ Այս ոչ ոքից, Բայց Կարող էմ Ընդունել Արդիւնքը



«Մանչեսթեր Եունայթեդը» գլխավոր մարզիչ Ժող է Մոուրիցիոն մեկնաբանել է ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան չորրորդ տուրում «Սթոք Սիթիի» հետ արտագնայ ոչ ոքին:

«Մանչեսթեր Եունայթեդը» բաւարարուեց 1 միաւորով, Միլիթարեանն աչքի ընկաւ առանցքային փոխանցումներով:

Ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան չորրորդ տուրում «Մանչեսթեր Եունայթեդը» արտագնայ՝ հանդիպում անցկացրեց «Սթոք Սիթիի» հետ եւ բաւարարուեց մէկ միաւորով՝ 2:2:

Պորտուգալացի Ժող է Մոուրիցիոյ գլխավորած թիմի կազմում աչքի ընկան անգլիացի յարձակուող Մարկուս Ռեշֆորդն ու բելգիացի յարձակուող Ռոմելու Լուկակուն:

«Մանչեսթեր Եունայթեդը» երկու կողերի դրուագներում էլ առանցքային փոխանցումները կատարեց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միլիթարյանը:

«Մանչեսթեր Եունայթեդը» 10 միաւորով եւ կողերի 12:2 տարբերութեամբ գլխավորում է մրցաշարային աղիւսակը: 10 միաւոր է վաստակել նաեւ «Մանչեսթեր Սիթիին» (10:2): «Չելսին» ունի 9, «Ուոլֆորդը»՝ 8 միաւոր:

### «Մանչեսթեր Սիթի» - «Լիվերպուլ»՝ 5-0

Անգլիայի առաջնութեան չորրորդ տուրում «Մանչեսթեր Սիթիին» հիւրընկալեց «Լիվերպուլին» եւ առաւելութեան հասաւ 5:0 հաշուով: Դուբլի հեղինակ դարձան պրագիլացի յարձակուող Գաբրիէլ Ժեզուսը եւ գերմանացի կիսապաշտպան Լերոյ Սանեն: Մէկ անգամ աչքի ընկաւ արգենտինացի յարձակուող Սերխիո Ագուերոն:

37-րդ րոպէից «Լիվերպուլը» հանդէս է եկել 10 ֆուտպոլիստներով: Դարպասապահի դէմ վտանգաւոր խաղի եւ ոտքով գլխին հարուածելու համար հեռացուել է սենեգալացի յարձակուող Սադիո Մանեն: «Մանչեսթեր Սիթիի» պրագիլացի դարպասապահ էդերսոնին փոխարինել է չիլիացի Կլաուդիո Բրաւոն:

### Լա Լիգայի Նախագահ. Կատալոնիայի Անկախացման Դէպքում, «Բարսելոնան» Դուրս Կը Մնայ Պրիմերայից

Սպանական Լա Լիգայի նախագահ Խալվեր Տեբասն ակնարկել է, որ Կատալոնիայի անկախացման դէպքում, «Բարսելոնան» չի կարողանայ հանդէս գալ ֆուտպոլի Սպանիայի առաջնութիւնում եւ կը կորցնի եւրոպական առաջատար ակումբի կարգավիճակը:

«Եթէ Կատալոնիայի անկախութեան հանրաքուէն տեղի ունենայ եւ երկրամասն անջատուի Սպանիայից, «Բարսելոնայի» ապագան կարող է միայն անհանգստացնել: Սպանիայի օրէնսդրութեան եւ մեր կանոնադրութեան խնդիր կայ: Կատալոնական ակումբին բարդ կը լինի համաձայնութեան հասնել Պրիմերայում մրցելու շարունակելու հարցում: Իսկ Պրիմերայից դուրս «Բարսելոնան» կը կորցնի եւրոպական սուպերակումբի կարգավիճակը: Ակումբը կը գրկուի Սպանիայի առաջնութեան հեռարձակումների իրաւունքից ստացուող եկամուտից», - Տեբասի խօսքը մէջբերում է AS-ը:

«Բարսելոնա» ֆուտպոլային ակումբը միշտ կողմ է հանդէս եկել Կատալոնիայի անկախութեանը եւ այդ մասին արել է հրապարակային յայտարարութիւններ:

### Մարկոս Պիզելիի Զրաշք Կուլն Անկիւնայինից

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Մարկոս Պիզելին «Ալ Շաբաբի» կազմում անկիւնային հարուածով կոլի հեղինակ է դարձել ֆուտպոլի Սաուդյան Արաբիայի գաւաթի խաղարկութիւնում:

1/8 եզրափակիչում «Ալ Շաբաբը» սեփական դաշտում նուազագոյն հաշուով յաղթել է «Ալ Բատենին», իսկ Մարկոսը յաղթական կոլը խփել է 68-րդ րոպէին: «Ալ Շաբաբը» քառորդ եզրափակիչում է:



### «Շիրակը» 5-րդ Անընդմէջ Յաղթանակը Տարաւ Եւ Մեծացրեց Առաւելութիւնը

Ֆուտպոլի Հայաստանի Բարձրագոյն խմբի 5-րդ տուրի վերջին խաղում առաջատար Գիւմրիի «Շիրակը» 2:0 հաշուով արտագնայ յաղթանակ տարաւ «Փիւնիկի» նկատմամբ եւ մեծացրեց առաւելութիւնը:

Երեւանի «Հանրապետական»

ստադիոնում կայացած խաղի հաշիւն առաջին խաղակեսի վերջնամասում բացեց կոտորուող յարձակուող Փոլ Մուսա Բակայոկոն, իսկ հիւրերի երկրորդ կոլը 75-րդ րոպէին խփեց սերբ կիսապաշտպան Իգոր Ստանոյեւիչը:

Այս յաղթանակից յետոյ գիւմրեցիները վաստակեցին 15 միաւոր ու 7 միաւոր առաջ անցան երկրորդ տեղում ընթացող «Ալաշկերտից»: Երրորդ տեղում գտնուող «Բանանցն» ունի 7 միաւոր, իսկ «Փյունիկը»՝ 6:



### Մոսկուայի «Արարատը» Յաղթանակ է Կորզել Վերջին Րոպէին

Ֆուտպոլի Ռուսաստանի երկրորդ դիւիզիոնի «Կենտրոն» գոտու մրցաշարի 8-րդ տուրում Մոսկուայի «Արարատը» տանը նուազագոյն հաշուով յաղթել է «Ռյազանին»: «Արարատի» յաղթական կոլը 90-րդ րոպէին խփել է ռուս պաշտպան Եգոր Տարականովը:

Այս յաղթանակից յետոյ «Արարատը» շարունակում է 20 միաւորով գլխավորել մրցաշարային աղիւսակը:

Օրերս լուրեր էին շրջանառուում, որ «Արարատի» հիմնադիր Վալերի Յովհաննիսեանի՝ ակումբի հաշուհամարից 20 միլիոն ռուբլի իւրացնելու պատճառով թիմը կարող է լուծարուել «Ռյազանի» դէմ հանդիպումից յետոյ: Սակայն Սեպտեմբերի 7-ին յայտնի դարձաւ, որ Վալերի Յովհաննիսեանը վերադարձրել է գումարը եւ ակումբը կը շարունակի իր գոյութիւնն առանց նրա:

### Երեւանում Անցկացուած Լողափնայ Վոլէյպոլի Միջազգային Մրցաշարում Յաղթել Եմ Ռուսները

Երեւանում անցկացուած լողափնայ վոլէյպոլի տղամարդկանց Արեւելեան Եւրոպայի երկրների առաջնութիւնն աւարտուել է ռուսների յաղթանակով:

Եզրափակիչ խաղում հանդիպել են Ռուսաստանը ներկայացնող Մաքսիմ Սիվոլով/Իգոր Վելիչկո եւ Ռուսական Դայանով/Յուրի Բոգատով զուգերը: Յաղթել է Սիվոլով/Վելիչկո զուգը, յայտնում է ՀԱՕԿ-ի կայքը:

Երրորդ տեղը զբաղեցրել է Բելառուսը ներկայացնող Ալեքսանդր Կովալենկո/Ալեքսանդր Դեդկով զուգը: Հայաստանն այս մրցաշարում ներկայացնում էին Ռազմիկ Յակոբեան/Արման Միսկարեան եւ Աշոտ Բալաբեկեան/Անդրէ Սիմոնի զուգերը, որոնք յաջողութեան չեն հասել: Այս մրցաշարը վարկանիշային է 2020թ. ամառային Օլիմպիական խաղերի համար: Մասնակցում էին 15 թիմեր՝ Հայաստանից, Ռուսաստանից, Բելառուսից, Ուկրաինայից, Վրաստանից, Լիտւայից, Լեհաստանից եւ Իսրայէլից:



Հ.Ս.Ս. ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՅԱԶՈՐԴ ԽԱՂԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ  
H.M.M. SOCCER TEAMS  
NEXT GAME SCHEDULE



HOMENMEN SAHARA TEAM  
- Sunday 9/17/17 3:20 pm  
Homenmen Sahara VS Intere - Diablos FC  
Marshal High School 3939 Tracy Street, Los Angeles, CA 90027

HOMENMEN ANGEL TEAM  
- Sunday 9/17/17 5:35pm  
Homenmen Angel VS Club LA  
Griffith Park 3401 Riverside Drive, Los Angeles, CA 90027

### Լեւոն Մկրտչեանը «Սարքե՛լ» է

Շարունակուած էջ 2-էն

րութիւնները: Ու սա բաւարար չէ, հիմա էլ, երբ քննութիւնը դեռ չի աւարտուել, Սերժ Սարգսեանը պարզեւատրուած է Արամ Դանիէլեանի որդուն: Իհարկէ, վիժարը դժբախտ պատահար է, սակայն այս դէպքի նրբութիւնն այն է, որ անչափահաս երեխան պարզապէս աւտոմեքենայ վարելու իրաւունք չունի:

«Մետալը 12 տարուայ գիտելիքի արդիւնք է՝ անկախ նրանից՝ երեխան պաշտօնեանի որդի է, թէ ոչ», - փոխարէնը պաշտպանում է նախարարը, կոչ անում առանձնացնել վրաերթի թեման մետալ ստանալու թեմայից:

«Իսկ եթէ պատժէինք ու երեխային գրկէինք մետալից, շատ աւելի մեծ հարուած էջի՞նք հասցնի մեր հասարակութեանը, մարդը կատարում է քրէական բնոյթի խնդիր եւ դու նրան պատժում ես այլ դաշտում՝ իր ուսումնառութեան դաշտում», - ասում է նախարարն ու նեղրտած հարցնում՝ ինչ է, որ պաշտօնեայի երեխայ է, պիտի պարզեւ ստանալու իրաւունք չունենայ:

Նախ պարոն նախարար, հենց դուք էք, որ պէտք է գերազանց իմանաք, թէ մեր երկրում պաշտօնեայի երեխան ինչ կատեգորիա է, ինչպէս եւ ինչ ճանապարհով են

բարձր «առաջադիմութիւն» ցուցաբերում եւ ինչի համար, ինչ հեռահար նպատակներով: Երբ հրապարակուեց գինուորական ծառայութիւնից ազատուած պաշտօնեաների երեխաների ցուցակները, թեւեւս տուեց այս հարցի պատասխանը: Սակայն, եթէ պնդում էք, թէ մէկը միւսի հետ կապ չունի, պէտք է ասենք, որ ինքնեզր էլ թեւեւ կապ չունեք ուղղութիւն հետ: Որպէս կֆ նախարար, չէք կարող չիմանալ, որ ոսկէ մետալով պարգեւատրուած են ոչ միայն ուսման առաջադիմութեան, այլեւ օրինակելի վարքի համար: Արդեօք քաղաքապետի որդին օրինակելի վարք է դրսեւորել՝ խախտելով օրէնքը, չունենալով վարորդական իրաւունք, այնպիսի «գոնկաներ» է արել, որը ողբերգական էլք է ունեցել: Եւ անկախ այս ամէնից, գուցէ բարոյագեղեցիկական տեսանկիւնից էր պէտք դիտարկել, որ այս պահին, երբ դեռ գործի քննութիւնը չի աւարտուել, երբ մարդկային կեանք է խլուել մի անչափահասի կողմից, որը վարելու իրաւունք առհասարակ չունի, ուղղակի մեծագոյն ամօթ էր ոսկի դնել մի երեխայի դոշին, որը եթէ անգամ ուսման առաջամարտիկ է, բայց կեանքում անամօթ ու անօրէն է, ինչպէս հայրը:

«ՀԱՅԵԼԻ»

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ

Շարունակուած էջ 8-էն

թերթի հիմնադիր, վարիչ և խմբագիր՝ Յովհաննէս Բալայեանի հիմը դրին այս հայրենանուէր գործին:

Սկիզբը այս հիմնադրամը սօնական նուէրներ կը հասցնէր հայրենիքի ծնողագուրու և հաշմանդամ պատկաններուն, ապա լծուեցան աւելի անհրաժեշտ գործի մը, որն է՝ նորոգել Հայաստանի մանկատուները, անոնց դպրոցները և նորոգել որոշ կեդրոնները հիմնադրամի կարողութիւններուն համաձայն:

Իսկ այս տարուայ թեւեթոնի գումարով պիտի նորոգուի Սպիտակ քաղաքի ԹԻՒ 1 մանկապարտէզ-նախակրթարանը, ինչպէս նաեւ այդ քաղաքի մշակուցի կեդրոնը, և Սպիտակի միակ մարզահամալիրի պասքէթ-պոլի հակաթաճաւ փակ սրահը:

Այս կրթական և սպորտի հաստատութիւններէն պիտի օգտուին մօտ 1500 պատանիներ և փոքրիկներ: Քաղաքի մշակութային կեդրոնը պիտի ծառայէ քաղաքի մշակութային կեանքի աշխուժացման և զարգացման:

Նախորդ տարիներուն նման, այս տարի ալ, այս դրամահաւաքին պիտի մասնակցին քաղաքի, գաւառի և նահանգային պետական անձնաւորութիւններ, գաղութիս հոգեւոր և աշխարհիկ ղեկավարներ, մեր քաղաքի աննման արուեստագէտները իրենց արուեստով և կոչերով պիտի խրախուսեն ժողովուրդը որ իրենց մեծ կամ պզտիկ նուիրատուութիւններով սատարեն 18-րդ թեւեթոնի յաջողութեան:

Այո, սիրելի հայրենակիցներ, բոլորս ալ ժամադրուած ենք

Սեպտեմբեր 21-ին, երեկոյեան ժամը 4-12 հետեւելու քաղաքի AABC թիւ 384 և ARTN TV 388 կայաններէն սփռուած յայտագրին և մեր մասնակցութիւնը բերելու այս արբանքան գործին:

Այսօրուան ծնողագուրկ և անտէր փոքրիկներու տէր ըլլալով, անոնք կրնան մեր հայրենիքի լու-

սաշող աստղերը դառնալ և մեր ժողովուրդի փրկութեան լաստերը ըլլալ: Բնաւ չթերագնահատենք կամ անտարբեր ըլլանք այս խաւին նկատմամբ, և բոլորս ալ միասիրտ և միասնական ամենէն գեղեցիկ օրինակը տանք, Հինգշաբթի, Սեպտեմբեր 21-ին մեր առատաձեռն մասնակցութիւնը բերելով այս թեւեթոնին:

Հայաստանի Ծնողագուրկ և հաշմանդամ երեխաներու օգնութեան հիմնադրամի անդամները, գլխաւորութեամբ՝ ջաւերժ երիտասարդ Յովհաննէս Բալայեանին 18 տարիէ ի վեր կը տանին այս գործը, արժանանալով հայրենի ծնողագուրկ փոքրիկներուն օրհնութեան և գնահատանքին:

Եկէ՛ք մենք ալ՝ մեր նպաստով այս մանուկներուն դէմքին վրայ ժպիտ մը դնենք և անոնց կեանքի մէկ հանգրուանին օգտակար ըլլանք մեր հայ փոքրիկներուն: Զմոռնալ, Հինգշաբթի, Սեպտեմբեր 21, 2017, կէսօրէ ետք ժամը 4-12 դիտել, Վրէժ Աղաճանեանի AABC թիւ 384 և Ռոբերթ Օղլախչեանի ARTN TV 388 հեռուստակայանները:

«Թող հայակերտ մեր երկիրը Ծաղկի ու գօրանայ, Մեսրոպատառ հայոց գիրը Հայ մտքի լոյսը դառնայ: Մէկտեղ ուխտեմք ու պայքարենք  
Ունենանք յոյս, հաւատ, Փառքի պսակով զարդարենք Հայոց լեռը՝ Արարատ»: Արման Յովհաննիսեան  
\*\*\*\*\*

Make your donations to: Armenian American Orphans Disabled Children Fund, Inc. Non-Profit Organization A Tax-Exempt 501 (c)3 Charity Direct Deposit: Wells Fargo Bank Acc #1736835495 Tel. (818) 246-0125, (818) 246-2070, (818) 747-3276 (818) 239-6880 [Forourkids99@gmail.com](mailto:Forourkids99@gmail.com) 626 W. Colorado St. Glendale, CA 91204

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՐԺԱՆԻ Է

Շարունակուած էջ 13-էն

գտնուում էր բարձր մակարդակի վրայ, մենք հպարտանում էինք մեր դասախոսներով և բուհերի համբաւով, իսկ այսօր Հայաստանի կրթական մակարդակը աղէտալի վիճակում է և դրա պատճառները բազմազան են, որոնք շուտափոյթ պէտք է քննարկուեն կրթութեան և Գիտութեան նախարարութիւնում և Ազգային ժողովում: Մեր բուհերը հիմնովին պէտք է վերակառուցուեն: Պատճառը՝ 1. Ընդունելութեան քննութիւնների արդիւնքները, և սոյն թուի Յուլիսի 15-ի ֆէյսպուքեան իր հշում Արգիշտի Աճէմեանի գրութիւնը:

«Ուշադրութիւն, QS word university rankings-ը հրապարակել է աշխարհի 900 համալսարանների ցանկը:

Հայաստանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններից (բուհերից) և ոչ մէկը տեղ չի գտել աշխարհի մօտ 900 առաջատար համալսարանների ցուցակում, որ հրատարակել է կրթական խնդիրների հետազօտութիւններով զբաղող բրիտանական Quaquarelli Simons՝ QS հեղինակաւոր կեդրոնը:

Փոխարէնը այս ցուցակում տեղ են գտել միանգամից երեք ատրպէյճանական համալսարաններ: Ճիշտ է հարեւան երկրում գործող այս երեք ուսումնական հաստատութիւններն էլ QS-ի հրապարակած ցանկի ետնամասում են: Պարտւում գործող «Կովկաս» համալսարանը ատրպէյճանական բուհերի թւում լաւագոյնն է՝ զբաղեցնելով համաշխարհային ցանկի 675-րդ հորիզոնականը: Պարտուի պետական համալսարանը՝ 713-րդ է, իսկ ատրպէյճանական մէկ այլ ուսումնական հաստատութիւն՝ «Խազար» համալսարանը՝ 737-րդը:

Սրանք բրիտանական կազմակերպութեան կողմից կազմուած ցանկի միակ հարակից կասեան համալսարաններն են: Վրացական համալսարանները ևս, ինչպէս և հայկականները դուրս են մնացել աշխարհի առաջատար բուհերի ցանկից»:

Պրն. Աճէմեանը մանրամասն նկարագրում է, թէ բրիտանացի հետազօտողները ինչպէս են կազմում այս վարկանշային աղիւսակը:

Վերջում նա գրում է. «Հ. Գ. Պարզապէս ամաչում եմ»:

Այստեղ մեկնաբանութիւնները աւելորդ են՝ Հայաստանի բուհերի մասին վերը բերուած փաստերից յետոյ: Թէ ինչպէ՞ս են ատրպէյճանական բուհերը յալոնուել այդ ցուցակում՝ առաջ անցնելով հայկականներից, այդ էլ մի ուրիշ հարց է, որը ենթակայ է լուրջ ուսումնասիրման...:

Վերջում մի գաւեշտական դէպքի մասին. ըստ Հայաստանի լրատուական միջոցների, Սամուէլ Ալեքսանեանը դատեր հարսանիքը ծաղկեցնող երգիչ Ջասթին Թիմբերլեյքին վճարել է մէկ միլիոն տոլար: Սա մեծ աղմուկ է բարձրացրել Երևանում:

Լրագրողների պնդումը, թէ մէկ միլիոն տոլար է վճարել դատեր հարսանիքի համար (նա հերքում էր այդ լուրը), Սամուէլ Ալեքսանեանը պատասխանել է. «Էդ մի միլիոն տոլարը, որ ես երգիչին պիտի տայի, դրա տեղը մի հատ լաւ արտադրութիւն կ'ստանայ՝ երեկեքը կը դնէին: Էդ ձեր համար փող չի, իմ համար էքա փողա: Մի հատ լաւ տրիկոտաժի մի 500 տեղանոց արտադրութիւն կը դնէի» (ուշադրութիւն չենք դարձնում նրա «մաքուր» հայերէն խօսելու վրայ):

Նշուած է, որ երգիչին տուած այդ մէկ միլիոն տոլարով Սամուէլ Ալեքսանեանը կարող էր 30-50 ընտանիքի բնակարանով ապահովել: Իսկ սփիւռեալ հայերս Ամերիկայում և այլ երկրներում հեռուստամարթոն ու այլ միջոցառումներ ենք կազմակերպում՝ Գիւմրիի, Վանաձորի, բանակի... համար դրամ հաւաքելու...:

Հայաստանի կառավարութիւնը պէտք է սթափուի և անյապաղ լուրջ միջոցների դիմի ժողովրդի բարօրութիւնը բարձրացնելու համար՝ վերջ տալով նրան ստորացնելուց: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՐԺԱՆԻ Է ՄԵԾ ՅԱՐԳԱՆՔԻ՝ իր կաշուից ելնելով գոյութիւնը պահպանելու և սահմաններում գոհեր տալով Հայաստանի անվտանգութիւնը ապահովելու համար: Վերջապէս հասկացէ՛ք, որ առանց հզօր պետականութեան ու գինուորի բաւարար թուաքանակի Հայաստանն ու Արցախը չեն կարող գոյատեւել...:

### ԳՆԱՀԱՏԱՆՔ

Մեր թերթի հաւատաւոր ընթերցողներէն մի ոմն՝ գնահատելով «Մասիս»ի բովանդակութիւնն ու որդեգրած ուղղութիւնը \$100 կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Email: -----



# ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

### Փառաստօն



Organized By  
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

## SUNDAY SEPTEMBER 17, 2017

### VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

Live Music & Dancing  
ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

Art Work Exhibition  
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ  
ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ

Kids Games  
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ

Armenian Food  
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

GENERAL SPONSOR

INNOVATIVE

Designs & Manufacturing, Inc.  
By TED & NORA KOROGHLIAN



To reserve your vendor booth  
please call Nor Serount Cultural Association  
Ձեր կրպակները ապահովելու համար  
հեռաձայնեցե՛ք Նոր Սերունդ Մշակութային Միության  
(818) 391-7938

SPONSORS

